ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԴԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ
(1880–1908 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գրիգորյան Հ. Բ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՍՏԵՓԱՆՅԱՆ Խ. Ռ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 31-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մշտապես գտնվելով սփյուռքահայ պատմագրության ուշադրության կիզակետում, խորհրդային պատմության վերջին տասնամյակներին իր վրա հրավիրելով նաև խորհրդահայ ուսումնասիրողների ուշադրությունը, ազատագրական պայքարի հիմնախնդիրը հետխորհրդային շրջանում լուրջ ուսումնասիրության առարկա է դարձել Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրողների համար: Դա պատահական չէ, քանի որ մեր օրերում, երբ պետական մակարդակով բարձրացվում է Հայոց ցեղասպանության հարցը, այդ հիմնախնդրի հետ սերտորեն միահյուսված հայ ազատագրական պայքարի և Հայկական հարցի հետ առնչվող իրադարձությունների համապարփակ ուսումնասիրությունը, ձեռքբերումների, թույլ տրված սխալների ու բացթողումների մատնանշումը և դասերը հաշվի առնելը ոչ միայն իմացաբանական նշանակություն, այլև գործնական կարևորություն ունեն:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է հարուստ փաստագրական հիմքի վրա՝ ապաքաղաքական մոտեցմամբ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարում Կարսի մարզի դերի անկողմնակալ ներկայացումը և գնահատումը:

Մեր առջև խնդիր ենք դրել՝ 1. ըստ ամենայնի արժևորել հետազոտվող խնդրին նվիրված ուսումնասիրությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ցայսօր անբավարար են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ, 2. ուսումնասիրությունների, արխիվային փաստաթղթերի, տպագիր վավերագրերի և մամուլից քաղված նյութերի լայն օգտագործմամբ ներկայացնել Կարսի մարզի էթնոքաղաքական կացությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, պարզաբանել այստեղ ստեղծված հեղափոխա-կան կառույցների նպատակներն ու ծավալած գործունեությունը, 3. բացահայտել արևմտահայ ազատագրական պայքարին օժանդակելու դժվարությունները, պարզաբանել այդ հարցում ցարական իշխանությունների բացասական դիրք-որոշման պատճառները, 4. քննական վերլուծության ենթարկել ՀՅԴ և այլ քաղա-քական ուժերի նախաձեռնությամբ Կարսի մարզի տեղծված արշավախմբերի, զինատար և մարտական խմբերի գործունեությունը, բացահայտել դրանց մեծ մասի անարդյունավետության պատճառները, 5. հանգամանորեն ներկայացնել ՀՅԴ կողմից մարզի բնակչության շրջանում տարված կազմակերպչական ու քարոզչական աշխատանքը, արշավախմբերի և մարտական այլ խմբերի կազմավորման գործին մարզի և Ալեքսանդրապոլի գավառի հայ բնակչության ունեցած եռանդուն մասնակցությունը, 6. պարզաբանել զենք ու զինամթերք հայթայթելու, դրանք Կարսի մարզի տարածք փոխադրելու և պահեստավորելու դժվարությունները, այդ ուղղությամբ հեղափոխական կառույցների ծավալած գործունեությունը, 7. լուսաբանել Կարսի մարզի հեղափոխական կառույցներում 1897-1901 թթ. և 1905-1909 թթ. տիրող դրությունը, պարզաբանել ավազակախմբերի և խաչագողության դեմ պայքարում ՀՅԴ տեղի կառույցների անկարողության պատճառներն ու հետևանքները:

Ուսումնասիրության մեջ հստակեցված են հայ ազատագրական պայքարում Կարսի մարզի հեղափոխական կառույցների ակտիվության և պասիվության փուլերը: Արխիվային վավերագրերի հիման վրա հաշվարկված ու ճշտված են մարզի տարածքում կազմավորված արշավախմբերի, մարտական ու զինատար խմբերի թվակազմին, զինամթերքի ու խմբերի տեղակայման վայրերին ու երթու-

ղուն վերաբերող շատ տվյալներ: Ճշտված են վերոհիշյալ խմբերի կազմավորման, սահմանանցման և նրանցից ոմանց նախանշված վայրեր հասնելու ճշգրիտ ժամկետները:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն ամենից առաջ այն է, որ նրանում պատմագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ներկայացված է Կարսի մարզի կուսակցական և հեղափոխական կառույցների ձևավորման, դրանց կառուցվածքի, XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարում նրանց խաղացած դերի ծավալուն պատմությունը: Որոշ առումով գիտական նորույթի արժեք ունեն նաև արշավախմբերի և հարակից գործընթացների պատմաքննական վերլուծություններն ու ընդհանրացումները:

Ատենախոսությունում պատմագիտության մեջ առաջին անգամ օգտագործված են արխիվային նորահայտ մի շարք փաստաթղթեր, մինչ այժմ ուշադրության չարժանացած վավերագրեր, նամակներ և ժամանակակիցների վկայություններ, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու հիմնախնդրի մասին:

Կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կարելի է օգտագործել ԲՈՒՀ-երում «Հայոց պատմություն» ընդհանուր ծրագրի և «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» մագիստրոսական ծրագրի դասավանդման համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

Աղբյուրագիտական հենքը: Ատենախոսության աղբյուրագիտական բազան հարուստ է: Կարսի մարզում կազմավորված և երկիր անցած խմբերի, մարզի կուսակցական ու հեղափոխական կառույցների գործունեության, Հայոց ցեղասպանության հիմնախնդրի հետ սերտորեն միահյուսված հայ ազատագրական պայքարի և Հայկական հարցի հիմնախնդիրները չեն կորցրել իրենց արդիականությունը: Այդ և հարակից այլ հարցերի վերաբերյալ հրատարակվել են նամակների, արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հարուստ հավաքածուներ, ժամանակակիցների բազմաթիվ հուշագրություններ: Այլ խոսքով՝ հրապարակի վրա առկա է տպագիր սկզբնաղբյուրների լուրջ հենք:

Որքան էլ մեծ լինի վերը նշված տպագիր սկզբնաղբյուրների արժեքը, այնուհանդերձ, անհնար է գրել թեմային վերաբերող որևէ լուրջ պատմագիտական ուսումնասիրություն՝ առանց օգտվելու Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերից: Մեր ուսումնասիրության շրջանակներում օգտվել ենք ՀԱԱ Միսաք Տեր-Դանիելյանի (Արամայիս)[1] և Արիստակես Սեդրակյանի[2] ֆոնդերից, Կարսի մարզի զինվորական նահանգապետի գրասենյակի նյութերից[3], անձնական ծագում ունեցող վավերագրերի հավաքածուից[4], հայ ազատագրական շարժումների վերաբերյալ փաստաթղթերից[5], արտասահմանից ստացված վավերագրական

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 150, ց. 1, գ. 16, 38:
[2] Տե՛ս նույնը, ֆ. 175, ց. 1, գ. 123:
[3] Տե՛ս նույնը, ֆ. 274, ց. 1, գ. 9:
[4] Տե՛ս նույնը, ֆ. 314, ց. 8, գ. 6, ց. 32, գ. 8:
[5] Տե՛ս նույնը, ֆ. 402, ց. 1, գ. 24, 25:

նյութերի հավաքածուներից[6], Մկրտիչ Ներսիսյանի[7], Եղիշե քահանա Գեղամյանի[8] արխիվային ֆոնդերից, ՍԴ Հնչակյան[9] և ՀՅԴ[10] կուսակցությունների ֆոնդերից:

Արխիվային կարևոր փաստաթղթեր են պարունակում նաև Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվը[11] և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պահվող պատմաբան Լեոյի անձնական արխիվը[12]:

Արխիվային վավերագրերի կողքին ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել վավերագրերի տպագիր ժողովածուները:

Մեծ արժեք է ներկայացնում Ս. Վրացյանի կազմած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» երկհատորյակը[13]: ՀՅԴ Բոստոնի կենտրոնական արխիվում պահվող փաստաթղթերի դասակարգման և հրատարակման գործում հատկապես անգնահատելի է Հ. Տասնապետյանի[14] և Ե. Փամբուկյանի[15] կատարած հսկայածավալ աշխատանքը, որի արդյունքում տպագրվել են «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ինը մեծածավալ հատորները: Տպագիր սկզբնաղբյուրների մեջ կարևոր են նաև Հ. Տասնապետյանի կողմից համակարգված ու հրատարակած ՀՅԴ հիմնադիր երրորդության՝ Ստ. Զորյանի (Ռոստոմ), Ս. Զավարյանի և Ք. Միքայելյանի նամականին[16]:

Խորհրդային Հայաստանում փաստաթղթերի ու նյութերի հրատարակման գործում որոշակի ներդրում է ունեցել Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան)[17]:

Ցարական իշխանությունների՝ Հ.Յ. Դաշնակցության դեմ հարուցած քրեական գործի և այդ առթիվ կազմակերպված ՀՅԴ մեծ դատավարության վերաբերյալ որոշ փաստաթղթեր լույս են տեսել «Վէմ» ամսագրի էջերում[18]:

Կարսի մարզի բնակչության թվաքանակի և ժողովրդագրական վիճակի վերաբերյալ կարևոր տվյալներ են պարունակում «Կարսի մարզը 1890 թվակա-

---

[6] Տե՛ս նույնը, ֆ. 420, g. 16, գ. 8, g. 81, գ. 214:
[7] Տե՛ս նույնը, ֆ. 818, g. 1, գ. 238, 515:
[8] Տե՛ս նույնը, ֆ. 1296, g. 1, գ. 51:
[9] Տե՛ս նույնը, ֆ. 1456, g. 1, գ. 38, g. 2, գ. 7, 9, 24:
[10] Տե՛ս նույնը, ֆ. 1457, g. 1, գ. 1, 68, g. 2, գ. 16, g. 3, գ. 1, 2, 3, 4, 5, 6:
[11] Տե՛ս Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), Ատրպետի ֆոնդ, բաժ. 1, վավ. 9, 95, թղթածրար 3:
[12] Տե՛ս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, g. 1, գ. 162, 175:
[13] Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան (այսուհետև՝ Դիւան…), յաւելւած «Հայրենիք» ամսագրի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի կէդրոնական կոմիտեի, կազմեց Ս. Վրացեան, Ա. հատ., Պոսթըն, 1934, 395 էջ, Բ. հատ., Պոսթըն, 1938, 464 էջ:
[14] Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր…), խմբ. Հր. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, Ա. հատ., բ. տպագր., 1984, 304 էջ, Բ. հատ., բ. տպագր., 1985, 302 էջ, Գ. հատ., 1976, 357 էջ, Դ. հատ., 1982, 384 էջ:
[15] Տե՛ս Նիւթեր…, խմբ. Եր. Փամպուքեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, Ե. հատ., 2007, 529 էջ, Զ. հատ., 2010, 559 էջ, Է. հատ., 2010, 384 էջ, Ը. հատ., 2011, 496 էջ, Թ. հատ., 2012, 560 էջ:
[16] Տե՛ս Ռոստոմ (մահուան վաթսունամեակին առթիւ), հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, 1979, 444 էջ, տե՛ս նաև Ռոստոմ, Նամականի (մահուան ութսունամեակին առթիւ), հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, խմբ. Հր. Տասնապետեանի, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Ճեմարանի համակարգչային շարուածք, Պէյրութ, 1999, 669 էջ, տե՛ս նաև Սիմոն Զաւարեան (մահուան եօթանասունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Բ. հատ., Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 1992, 612 էջ, տե՛ս նաև Քրիստափոր Միքայէլեանի նամակները, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, խմբ. Հր. Տասնապետեանի, Համազգայինի ճեմարանի համակարգչային շարուածք, Պէյրութ, 1993, 414 էջ:
[17] Տե՛ս ժանդարմական վարչության զեկուցումները հայերի հեղափոխական շարժումների մասին, խմբ. Դ. Անանուն, «Նորք» հանդես, գիրք 5–6-րդ, Յերեվան, 1925, էջ 425-452:
[18] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները, «Վէմ (համահայկական հանդես)», Երեւան, 2009, թիւ 1 (26), էջ 155-172, թիւ 2 (27), էջ 144-170, թիւ 3 (28), էջ 165-185, 2010, թիւ 1 (29), էջ 149-165, թիւ 2 (30), էջ 166-184, թիւ 3 (31), էջ 184-196, թիւ 4 (32), էջ 186-194, 2011, թիւ 1 (33), էջ 193-205, թիւ 2 (34), էջ 193-216, թիւ 3 (35), էջ 221-240, թիւ 4 (36), էջ 182-209:

նին»[19], «Կարսի մարզը 1909 թվականին»[20], «Կովկասյան օրացույց 1912 թ.»[21] և «Կովկասյան օրացույց 1915 թ.»[22] ռուսալեզու վիճակագրական տեղեկագրերը:

Արխիվային փաստաթղթերի և տպագիր վավերագրերի կողքին սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև դեպքերի վերաբերյալ ականատեսների ու ժամանակակիցների հիշողությունները: Նշենք, որ նմանատիպ նյութերն, արժեք ներկայացնելով հանդերձ, աչքի են ընկնում սուբյեկտիվությամբ և միակողմանիությամբ, իսկ հիմնախնդրի տարբեր հարցերի վերաբերյալ արված դիտարկումները՝ կուսակցական անսխալականության մտայնությամբ, ինչպես նաև ժամանակագրական ակնհայտ անճշտություններով: Այս ամենով հանդերձ, նմանատիպ երկերի մեջ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ արժեքավոր վկայություններ են պարունակում հատկապես Մինաս Տեր-Մինասյանի (Ռուբեն)[23] և Արամայիս Ազնավուրյանի[24] հուշագրությունները:

Հիմնախնդրի տարբեր հարցերի վերաբերյալ արժեքավոր են հայ ազատագրական պայքարի ականավոր գործիչներ Սեքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովիանյան), Սեպուհի (Արշակ Ներսիսյան) և Կոմսի (Վահան Փափազյան) հուշերը[25]:

1880-ական թթ. Կարսի մարզում կազմավորված և Երկիր անցած առաջին խմբերի, «Դեպի Երկիր» կարգախոսի ձևավորման մասին տեղեկություններ են պարունակում պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյան) և Էրզրումի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության անդամ Հ. Նշկյանի հուշերը[26]:

Աղբյուրների վերջին խումբը ժամանակի պարբերական մամուլում դեպքերի թարմ տպավորությամբ հրատարակված նյութերն են: Հիմնախնդրի հետ կապված տարբեր հարցեր լուսաբանելիս օգտագործվել են «Արմենիա», «Դրոշակ», «Հայրենիք», «Հնչակ», «Ձայն հայրենյաց», «Մշակ» պարբերականներում հրատարակված բազմազան նյութեր:

---

[19] Տե՛ս Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1890 годъ, Карсъ, 1891, 77 стр.

[20] Տե՛ս Обзоръ Карсской области за 1909 годъ (Приложение къ всеподданейшему отчету), Карсъ, 1910, 112 стр.

[21] Տե՛ս Кавказский календарь на 1912 годъ, Тифлисъ, 1913, 892 стр.

[22] Տե՛ս Кавказский календарь на 1915 годъ, Тифлисъ, 1914, 896 стр.

[23] Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Երեւան, «Ադանա», Ա. հատ., 1990, 402 էջ, Բ. հատ., 1990, 328 էջ, Գ. հատ., 1990, 374 էջ, Դ. հատ., 1991, 414 էջ, Ե. հատ., 1991, 384 էջ, Զ. հատ., 1991, 460 էջ:

[24] Տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, խմբ. Ռ. Դարբինեան, Բոստոն, 1936, թիւ 9, էջ 99-110, թիւ 10, էջ 75-82, թիւ 11, էջ 115-122, 1937, թիւ 1, էջ 136-142, թիւ 2, էջ 135-144, թիւ 4, էջ 144-149, թիւ 5, էջ 135-141, թիւ 6, էջ 150-153, թիւ 8, էջ 133-141, թիւ 9, էջ 145-151, թիւ 10, էջ 156-160, թիւ 11, էջ 133-136, թիւ 12, էջ 126-136, 1938, թիւ 1, էջ 145-150, թիւ 2, էջ 118-123, թիւ 3, էջ 130-137, թիւ 4, էջ 158-163, թիւ 6, էջ 130-136, թիւ 7, էջ 137-140, թիւ 8, էջ 154-157, թիւ 9, էջ 140-143, թիւ 11, էջ 149-155, թիւ 12, էջ 134-139, տե՛ս նաև Ազնաւուրեան Ա., Առաջին յեղափոխական սուրհանդակները Ալաշկերտի մէջ, «Հայրենիք» ամսագիր, աշուն, 1968, թիւ 3, էջ 59-67, տե՛ս նաև Ազնաւուրեան Ա., Ցարական հալածանքը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, «Հայրենիք» ամսագիր, 1940, թիւ 6, էջ 114-132:

[25] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան դիւանէն Սեւ-քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ», 1929, թիւ 12, էջ 274-279, 1930, թիւ 1, էջ 16-20, թիւ 3, էջ 81-88, տե՛ս նաև Սեւ-քարեցի Սաքոյի ինքնակենսագրականը, Հ. Յ. Դաշնակցութեան երիտասարդական «Կայծեր» մատենաշար, թիւ 3, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 1994, 194 էջ, տե՛ս նաև Սեպուհ, Դրուագներ Սասունի կռիւներէն. դէպի Սասուն, Աւօյի պատմութիւնը, Կ. պօլիս, 1910, 36 էջ, տե՛ս նաև Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), գրի առաւ՝ Ա. Միքայէլեան, «Հայրենիք» ամսագիր, 1943, թիւ 4, էջ 83-88, թիւ 5, էջ 93-98, 1944, թիւ 1, էջ 93-96, թիւ 2, էջ 97-99, թիւ 3, էջ 76-80, թիւ 5, էջ 91-93, տե՛ս նաև Վերածին Մ., Ջօրաւար Սեպուհի յուշերը (մանկութիւն, պատանեկութիւն, երիտասարդութիւն), հրատարակութիւն «Քրիստափոր» մատենաշարի, Հալէպ, 1992, 96 էջ, տե՛ս նաև Փափազեան Վ., Իմ յուշերը, Ա. հատ., Պոսքը, տպ. «Հայրենիք»-ի, 1950, 600 էջ:

[26] Տե՛ս Լեո, Անցյալից: Յուշեր, թղթեր, դատումներ, Հայոց հարցը, Հեղափոխական Դաշնակցություն, Համաշխարհային պատերազմ, հեղափոխություն, Թիֆլիս, Խորհրդ. Կովկաս, 1925, 482 էջ, տե՛ս նաև Նշկեան Յ. Մ., Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, ա. տ., «Պայքար»-ի տպարան, 1930, 146 էջ:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության թեման ամբողջապես ընդգրկող համապարփակ ուսումնասիրություն հայ պատմագիտության մեջ առ այսօր չի ստեղծվել: Հրապարակի վրա առկա՝ Սփյուռքում և Հայաստանում ստեղծված պատմագիտական գրականության մեջ այս կամ այն չափով լուսաբանվել են միայն հիմնախնդրի առանձին կողմեր: Թեմայի հետ կապված առանձին հարցերի լուսաբանման առաջին փորձերը մինչխորհրդային շրջանում կատարել են Եղիշե քահանա Գեղամյանը և դաշնակցական գործիչ Արսեն Նորյանը (Արսեն Միքայելյան)[27]:

Սփյուռքում հիմնախնդրի հետ որոշակիորեն առնչվող ուսումնասիրություններից հատկապես կարևորվում են ՀՅԴ նշանավոր գործիչ Միքայել Վարանդյանի (Հովհաննիսյան) ուշագրավ ուսումնասիրությունները[28]: Լինելով այդ առումով առաջին փորձերը, դրանք հիմնականում կրել են հրապարակախոսական և փաստագրական բնույթ:

Սփյուռքում հրատարակված ուսումնասիրությունները, հիմնականում գրվելով ՀՅԴ անդամների կողմից՝ կրել են ցանկացած կուսակցությանը հատուկ անսխալականության մտայնությունը, ինչը որոշակիորեն ազդել է խնդրի անաչառ լուսաբանման վրա: Դրանով հանդերձ, XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրության գործում չի կարելի ժխտել սփյուռքահայ պատմագրության կարևոր ներդրումը:

Ատենախոսությունում լուսաբանվող դեպքերի վերաբերյալ արժեքավոր հարցադրումներ և փաստական հարուստ նյութ են պարունակում ՀՅԴ 60-ամյակին նվիրված «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950 թթ.)» ժողովածուի Ս. Վրացյանի գրչին պատկանող մի շարք հոդվածներ[29]:

Հայ ազատագրական շարժման վերաբերյալ աշխատություններով հանդես են եկել Կ. Սասունին և Ա. Աստվածատրյանը[30]:

1970-1980-ական թթ. հրատարակվել են XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարին նվիրված մի շարք խիստ ուշագրավ աշխատություններ, որոնց մեջ իր ծավալով ու պատմաքննական մոտեցմամբ աչքի է ընկնում Լ. Չորմիսյանի ուսումնասիրությունը[31]:

---

[27] Տե՛ս Գեղամեանց Ե., Մտորումներ (հայ ազգի վիճակի մասին), Թիֆլիս, վրաց. տպագրական ընկերութիւն, 1907, 112 էջ, տե՛ս նույնի Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի վեցերորդ շրջանը, Բագու, Էլեքտր.- տպարան, 1915, 684 էջ, տե՛ս նաև Նորեան Ա., Դրւագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից, Ա. տասնամեակ, Բոստոն, «Հայրենիք» տպարան, 1917, 492 էջ:

[28] Տե՛ս Վարանդեան Մ., Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), Պոսքըն, հրատ. Մուրատ ֆոնտի կէդր. վարչութեան, 1931, 348 էջ, տե՛ս նաև նույնի Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւանի պետական համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1992, 536 էջ:

[29] Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890–1950, կազմեց Ս. Վրացեան, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի, Բոստոն, «Հայրենիք»-ի տպարան, 1950, 636 էջ:

[30] Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, 1931, թիւ 4, էջ 72-88, տե՛ս նույնի Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), տպարան «Ատլաս», Պէյրութ, 1964, 48 էջ, տե՛ս նույնի Պատմութիւն Տարօնի աշխարհի, հրատարակութիւն Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան կէդրոնական վարչութեան, տպարան «Սեւան», Պէյրութ, 1957, 1252 էջ, տե՛ս նաև Աստուածատրեան Ա., Իշխանը (Նիկոլ Միքայէլեան), «Հայրենիք» ամսագիր, 1955, թիւ 12, էջ 82-96, 1956, թիւ 1, էջ 41-45, թիւ 2, էջ 45-54, տե՛ս նույնի Ռուբէնը, «Հայրենիք» ամսագիր, 1965, թիւ 4, էջ 19-35, թիւ 5, էջ 34-50, թիւ 6, էջ 49-62, թիւ 7, էջ 33-47, թիւ 8, էջ 54-66, թիւ 12, էջ 17-28, 1966, թիւ 1, էջ 27-32, թիւ 3, էջ 32-41, թիւ 4, էջ 43-48, թիւ 5, էջ 32-40, թիւ 6, էջ 49-55, տե՛ս նույնի Արամը, Արամը (մահուան յիսնամեակին առթիւ), «Դէպի Երկիր» մատենաշար, թիւ 1, Երեւան, «Միքայէլ Վարանդեան» հրատարակչութիւն, 1991, էջ 11-145:

[31] Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ. հատ., 1878-1908 թթ., Պէյրութ, տպարան «Սեւան», 1974, 572 էջ:

ՀՅԴ XIX դարի վերջի և XX դարի սկզբի պատմության վերաբերյալ ունեցած պատմաքննական մոտեցմամբ ուշագրավ են Հ. Տասնապետյանի ուսումնասիրությունները[32]:

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև Արշակ Խոնդկարյանի և Սեպուհի «Հայրենիք» ամսագրի էջերում հրատարակված հոդվածները[33]:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարի առանձին հարցերի և գործիչների վերաբերյալ «Հայրենիք» ամսագրի 1950-1960-ական թվականների հրապարակումներից արժեքավոր են Վալադ Վալադյանի հոդվածաշարերը[34]:

Հիմնախնդրի առանձին հարցեր **Խորհրդային Հայաստանում** առաջին անգամ լուսաբանվել են Դավիթ Անանունի և Լեոյի աշխատություններում[35]:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության առումով խորհրդահայ պատմագրությանը բնորոշ են եղել խնդրի քաղաքական շահարկումները, գաղափարական կոշտ կաղապարները, որոնք արգելք են հանդիսացել հիմնահարցի գիտական ուսումնասիրության համար: Իրավիճակը մասամբ փոխվեց 1950-ական թվականների կեսերից, երբ որոշակիորեն թուլացան գաղափարական կաղապարները: Այդ առումով առանձնանում են Մ. Ներսիսյանի[36] և Ռ. Հովհաննիսյանի[37] ուշագրավ ուսումնասիրությունները:

Կարսի մարզի սոցիալ-տնտեսական և էթնոքաղաքական պատմության վերաբերյալ աշխատություններով խորհրդային և հետխորհրդային տարիներին հանդես են եկել պատմաբաններ Ա. Պողոսյանը և Ա. Հակոբյանը[38]:

---

[32] Տե՛ս Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութեան մինչեւ Ժ. ընդհանուր ժողովը (1890-1924 թթ.), հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, «Դրօշակ»-ի տպարան, Աթէնք, 1988, 259 էջ, տե՛ս նույնի Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, «Դրօշակ», 1994, թիւ 21, էջ 18-29, թիւ 22, էջ 28-38, տե՛ս նույնի Պատմութիւն հայ յեղափոխական շարժման եւ Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, 2009, 504 էջ:

[33] Տե՛ս Խոնդկարեան Ա., Ցարական Ռուսաստանը եւ կովկասահայութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1930, թիւ 5, էջ 80-91, թիւ 6, էջ 143-155, տե՛ս նաև Սեպուհ, Խան-Պետրոսը (Բարսեղ Թիրաքեան), «Հայրենիք» ամսագիր, 1949, թիւ 2, էջ 11-20, թիւ 3, էջ 23-33:

[34] Տե՛ս Վալադեան Վ., Լեռնապարի Իշխանը, «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 9, էջ 1-11, թիւ 10, էջ 49-56, թիւ 11, էջ 48-55, տե՛ս նույնի Հրոսակապետ Յունօն, «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 4, էջ 34-44, թիւ 5, էջ 43-51, տե՛ս նույնի «Մրրիկ» խմբի արշաւը, «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 6, էջ 50-63, տե՛ս նույնի Սեւքարեցի Սաքօն, «Հայրենիք» ամսագիր, 1959, թիւ 2, էջ 1-12, թիւ 3, էջ 10-19, թիւ 4, էջ 49-61, թիւ 5, էջ 55-64, թիւ 6, էջ 42-52, թիւ 7, էջ 74-83, թիւ 8, էջ 78-84, տե՛ս նույնի Քեռին, «Հայրենիք» ամսագիր, 1959, թիւ 11, էջ 24-35, թիւ 12, էջ 52-63, 1960, թիւ 1, էջ 45-53, թիւ 2, էջ 49-58, թիւ 3, էջ 80-89, թիւ 4, էջ 61-72:

[35] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. երկրորդ (1870–1900), հրատարակութիւն էջմիածնի գիտական հնստիտուտի, էջմիածին, էջմիածնի գիտական հնստիտուտի տպարան, 1922, 274 էջ, հատ. երրորդ (1901-1918), Վենետիկ, տպարան սբ. Ղազարու, 1926, 694 էջ, տե՛ս նաև Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ., Պարիզ, տպագրութիւն՝ Պահրի եղբարց, 1935, 262 էջ:

[36] Տե՛ս Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ., Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1955, 532 էջ, տե՛ս նույնի Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1890 թթ., Երևան, ԳԱԱ «Գիտելիք» հրատարակչություն, 2002, 492 էջ:

[37] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային–ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965, 388 էջ:

[38] Տե՛ս Պողոսյան Ա., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում 1878-1920 թթ., Երևան, «Հայպետհրատ», 1961, 382 էջ, տե՛ս նաև նույնի Карсская область в составе России, Ереван, „Айастан", 1983, 285 стр., տե՛ս նաև Հակոբյան Ա., Կարսի մարզ. գյուղացիության պատմության ուրվագծեր. 1878–1917 թթ., Երևան, 2000, 167 էջ:

1980-ական թթ. խորհրդահայ պատմագիտության մեջ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության առումով որոշակի ներդրում էր Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի VI հատորը[39]:

Անկախացած **Հայաստանի Հանրապետությունում** հայ ազգային-ազատագրական պայքարին նվիրված ուսումնասիրություններով հանդես է գալիս կոմունիստական գաղափարախոսության կաղապարներից զերծ պատմաբանների առաջին սերունդը: Մյուս կողմից իրենց գործունեությունն են շարունակում և պատմագիտության մեջ թարմ խոսք ասում ավագ սերնդի ներկայացուցիչները:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարին նվիրված ստվարածավալ, մեծարժեք մենագրություններ է ստեղծել ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը[40]:

Կարսի մարզում իրենց հեղափոխական մկրտությունը ստացած գործիչներին նվիրված ուսումնասիրություններով են հանդես եկել Վ. Թաշճյանը, Ա. Ասրյանը և Խ. Ստեփանյանը[41]:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններով են հանդես եկել պատմաբաններ Ա. Մելքոնյանը, Գ. Հովհաննիսյանը[42], Գ. Խուդինյանը[43], Ա. Ներսիսյանը[44] և Հ. Գրիգորյանը[45]:

Կարսի մարզից Երկիր անցնող մարտական և զինատար խմբերի կազմավորման և սահմանանցման փաստերը մանրամասն ներկայացված են Հ. Գևորգյանի ուսումնասիրություններում[46]:

---

[39] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981, 1052 էջ:

[40] Տե՛ս Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Ա. գիրք, Երևան, «Կասիս» հրատարակչություն, 1996, 752 էջ, տե՛ս նաև նույնի Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, «Հայագիտակ» հրատարակչություն, 2003, 815 էջ, գիրք II, Երևան, «Հայագիտակ» հրատարակչություն, 2003, 760 էջ, գիրք III, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 1128 էջ, գիրք IV, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2010, 1204 էջ, գիրք V, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, 1296 էջ:

[41] Տե՛ս Թաշճեան Վ., Իշխանը (Վանայ Իշխանի կեանքն ու գործունէութիւնը), Երեւան, 1994, 251 էջ, տե՛ս նաև Ասրյան Ա., Արամ Մանուկյանի ազգային-քաղաքական գործունեության սկիզբը (կենսագրական ճշգրտումներ), «ԲՀԱ», 2002, թիվ 1, էջ 100-107, տե՛ս նույնի Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009, 267 էջ, տե՛ս նաև Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան. պայքարի առաջին փորձառությունը, «ԲՀԱ», 2004, թիվ 1, էջ 144-149, տե՛ս նույնի Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, «ՎՄՊ-Պրինտ», 2008, 183 էջ:

[42] Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 543 էջ, տե՛ս նաև Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915 թթ.), Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար, թիվ 83, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստ., 2012, 354 էջ:

[43] Տե՛ս Խուդինյան Գ., Սարգիս Կուկունյան, «Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ)», 1989, թիվ 11, էջ 24-35, տե՛ս նույնի Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Երևան, 2000, 227 էջ, տե՛ս նույնի ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), հրատարակություն Հ. Յ. Դաշնակցության, Երևան, 2006, 439 էջ:

[44] Տե՛ս Ներսիսյան Ա., Սեպուհ (Արշակ Ներսիսեան), «Դրօշակ», 1999, թիւ 12, էջ 25-29, տե՛ս նույնի Սեբաստացի Մուրատ (Մուրատ Խրիմեան), «Դրօշակ», 1999, թիւ 13, էջ 27-31, տե՛ս նույնի Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894–1908 թթ., Երևան, «Հայ էդիթ» հրատարակչություն, 1999, 130 էջ, տե՛ս նույնի Զորավար Սեպուհ, Երևան, «Էդիթ-Պրինտ», 2006, 346 էջ, տե՛ս նույնի Ռուբէն, «Ապրող հերոսներ» մատենաշար, թիւ 4, Երևան, «Էդիթ-Պրինտ» ՍՊԸ, 2007, 396 էջ, տե՛ս նույնի Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ. (1898-1908 թուականներ), «Զաւարեան» մատենաշար (Գ. շրջան), թիւ 1 (9), Պէյրութ, 2008, 400 էջ:

[45] Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Երևան, «Նոյյան տապան» հրատարակչություն, 2002, 96 էջ, տե՛ս նույնի 1894-1896 թթ. զանգվածային ջարդերի ազդեցությունը հայոց ազատամարտի հետագա մարտավարության վրա, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2005, էջ 24-48:

[46] Տե՛ս Գևորգյան Հ., Սեբաստացի Մուրադ, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 2003, 371 էջ, տե՛ս նաև նույնի Դրվագներ մարտական ու զինատար խմբերի պատմությունից, «ԲՀԱ», 2004, թիվ 2, էջ 67-78, տե՛ս նաև

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանի՝ Անդրկովկասում վարած գաղութային քաղաքականության և ցարական պահնորդական մարմինների մասին ուշագրավ տեղեկատվություն են պարունակում Վալերի Թունյանի աշխատությունները[47]:

Վերը հիշատակված աղբյուրագիտական նյութի և պատմագիտական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունն ու քննահամեմատական վերլուծությունը թույլ են տալիս հիմնախնդրի վերաբերյալ ստեղծելու ամբողջական և համակողմանի ուսումնասիրություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, 8 ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործած աղբյուրների ու գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 195 համակարգչային էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության ժամանակագրական և բովանդակային շրջանակները, մեթոդաբանությունը, աշխատանքի գիտական նորույթը, աղբյուրագիտական բազան և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՅՆՏԵՂԻՑ ԵՐԿԻՐ ԱՆՑԱԾ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԵՐԸ: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցում քննարկման են ենթարկվում՝ 1. Մարզի վարչաքաղաքական կառուցվածքն ու բնակչությունը, 2. Մարզից Երկիր անցած առաջին խմբերն ու անհատները:

Ռուս-թուրքական պատերազմից հետո՝ Ռուսաստանին անցած Կարսի սանջակից, Չլդրի սանջակի մեծ մասից և Բասենի սանջակի մի փոքր մասից ստեղծվում է Կարսի մարզը: Մարզային կենտրոնն էր Կարս քաղաքը: Մարզի ընդհանուր տարածքը կազմում էր 16.473 քառ. վերստ (18.400 քառ. կմ)[48]: Այստեղ հիմնվում է ուժեղ ռազմավարչական համակարգ՝ զինվորական նահանգապետի գլխավորությամբ:

Մարզի միացումը Ռուսաստանին նպաստում է արտադրողական ուժերի զարգացմանը: Զգալի չափով աճում է բնակչությունը: 1877 թ. 150-160 հազար բնակչից 1914 թ. մարզի բնակչության թիվը հասնում է 391.213 մարդու[49]: Բնակչության ազգային կազմը խայտաբղետ էր: Այստեղ ապրում էին 20-ից ավելի ազգեր, բայց տիրապետող և բնիկ տարրը կազմում էին հայերը, որոնց թիվը 1878 թ. 19.446 մարդուց[50] 1914 թ. հասնում է 113.938-ի[51]՝ կազմելով բնակչության ընդհանուր թվի 30 %-ը: Հայերից հետո իրենց թվաքանակով մարզում աչքի էին ընկնում թուրքերն ու քրդերը, որոնք 1914 թ. համապատասխանաբար կազմում էին 79.191 և 60.439 շունչ[52]: 1878 թվականից հետո այստեղ բնակություն են հաստատում նաև ռուսները, որոնց թիվը 1890 թ. 11.706-ից[53] 1910 թ. հասնում է

նույնի Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, «Լուսակն» հրատարակչություն, 2006, 574 էջ, տե՛ս նաև նույնի էջեր հայոց ազատամարտի (երկրորդ հրատարակություն), Երևան, 2010, 363 էջ:

[47] Տե՛ս Тунян В., Легенды и были: охранка и Армения XIX – нач. XX вв., Ереван, Чартарагет, 2008, 131 стр., տե՛ս նույնի Политика самодержавия России в Закавказье XIX – нач. XX вв., част V, (1877-1900 гг.), Ереван, Авт. изд., 2008, 124 стр., часть VI. (1900-1915 гг.), Ереван, Чартарагет, 2010, 134 стр.

[48] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 32, գ. 8, թ. 2, ֆ. 420, ց. 81, գ. 214, թ. 1:

[49] Տե՛ս Кавказский календарь на 1915 годъ, стр. 237.

[50] Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 27:

[51] Տե՛ս Кавказский календарь на 1915 годъ, стр. 235.

[52] Տե՛ս նույն տեղում, стр. 236-237.

[53] ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9, հտ. I, թ. 3:

18.000-ի[54]: Մարզում բնակվում էին նաև հույներ (1890 թ.՝ 25.578[55], 1913 թ.՝ 48.610[56]), թուրքմեններ (1890 թ.՝ 10.314[57], 1913 թ.՝ 16.557[58]), ղարափափախներ (1890 թ.՝ 26.217[59], 1913 թ.՝ 43.272[60]), լեզգիներ, պարսիկներ, գերմանացիներ, էստոնացիներ, հրեաներ (բոլորը միասին 1892 թ. կազմում էին մարզի բնակչության 5 %-ը (10.952 մարդ)[61]:

Բեռլինի կոնգրեսից հետո հայկական միջավայրում ծայր է առնում կամավորական մի շարժում: Այն գնալով մեծ ծավալ էր ընդունում և դառնում ավելի կազմակերպված: 1880 թ. Ալեքսանդրապոլում ստեղծվում է մի հանձնաժողով, որը ցուցակագրում էր Երկիր անցնելու ցանկություն ունեցող երիտասարդներին: Միայն 1880 թ. Երկիր են անցնում 4 խմբեր, որոնցում ընդգրկված էին 208 հոգի[62]: 1880-ական թթ. Երկիր են անցնում նաև մի շարք անհատ գործիչներ, որոնք «…ամիսներով կը շրջէին, կը դիտէին երկիրը, ժողովուրդը, անցուդարձը, եւ կը վերադառնային՝ առանց շօշափելի հետք ձգելու…»[63]:

Այս ամենը հանգեցնում է հեղափոխական կազմակերպությունների առաջացմանը ինչպես Կարսում, այնպես էլ Կաղզվանում և Ալաշկերտի գյուղերում: 1885 թ. Մկրտիչ Սարյանի և Հարություն Տեր-Մարտիրոսյանի (Հունո) նախաձեռնությամբ Ալաշկերտի Թոփրակկալե գյուղում ստեղծվում է մի հեղափոխական մարմին, որի առաջին ժողովում որոշվում է Ալաշկերտի մյուս «գիւղերում եւս ստեղծել յեղափոխական մարմիններ եւ ժողովուրդը պատրաստել ինքնապաշտպանութեան»[64]:

1889 թ. վերջին Հունոն խումբ է կազմում՝ ռուս-թուրքական սահմանն անցնելու ծրագրով: Խումբը 1890 թ. ապրիլին Մատռաբերդում մի շարք բախումներ է ունենում տեղի թուրքերի ու քրդերի հետ: 1890 թ. սկզբին «ուխտավորների» անվան տակ Արևմտյան Հայաստան են անցնում նախ Եփրեմ Դավթյանը և Զարխչյանը (Կարս-Սարիղամիշ-Բասեն-Խնուս-Խլաթ-Մուշ-Սասուն գծով), իսկ քիչ հետո՝ Հովսեփ Արղությանը, Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), Արշակ Բարխուդարյանը, Լևոն Սարգսյանը և Երվանդ Բաբերյանը (Զալլադ) (Երևան-Իգդիր-Ալաշկերտ-Մանազկերտ-Մուշ երթուղով):

1890 թ. սեպտեմբերի 23-ին ռուս-թուրքական սահմանը հատում է Սարգիս Կուկունյանի գլխավորած 107 հոգանոց արշավախումբը: Այն թուրք-քրդական ուժերի դեմ կռվելուց և ճանապարհը կորցնելուց հետո՝ մեկ օր անց վերադառնում է Կաղզվան: Խմբի անդամներից 43-ը ձերբակալվում են, որոնցից 26-ը դատապարտվում են տարբեր տարիների տաժանակիր աշխատանքի և աքսորի[65]:

---

[54] Տե՛ս Погосян А., Карсская область в составе России, стр. 127.
[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9, հտ. I, թ. 3, տե՛ս նաև Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1890 годъ, стр. 3.
[56] Տե՛ս Պողոսյան Ա., նշվ. աշխ., էջ 11:
[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9, հտ. I, թ. 3, տե՛ս նաև Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1890 годъ, стр. 3.
[58] Տե՛ս Պողոսյան Ա., նշվ. աշխ., էջ 11:
[59] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9, հտ. I, թ. 3, տե՛ս նաև Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1890 годъ, стр. 3.
[60] Տե՛ս Պողոսյան Ա., նշվ. աշխ., էջ 11:
[61] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 32, գ. 8, թ. 2, 18:
[62] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., էջ 177-178:
[63] Վարանդեան Մ., Դ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 51:
[64] Ազնաւուրեան Ա., Առաջին յեղափոխական սուրհանդակները Ալաշկերտի մէջ, «Հայրենիք» ամսագիր, աշուն, 1968, թիւ 3, էջ 62:
[65] Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հատ. 2, էջ 218, տե՛ս նաև Վրացեան Ս., Կուկունեան արշաւանքը, Յուշապատում Դ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, էջ 278, մանրամասն տե՛ս «Մշակ» լրագիր, 1915, թիւ 264:

Չնայած Ս. Կուկունյանի արշավանքը գործնականում ձախողվեց, բայց արևելահայերի շրջանում առաջ բերած աննախադեպ ոգևորության առումով կարևոր դեր խաղաց:

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶՈՒՄ 1891-1901 ԹԹ.: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցում քննութ-յան են առնվում՝ 1. Կուսակցական կառույցների ձևավորումը և նրանց ազատա-գրական գործունեությունը 1891-1895 թթ., 2. ՀՅԴ «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի գործունեությունը զենք ու զինամթերք հայթայթելու և Երկիր մարտա-կան ու զինատար խմբեր առաքելու ուղղությամբ (1896-1901 թթ.):

1890-ական թթ. ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Կարսի մարզի հայութ-յան շրջանում նշանավորվում են հեղափոխական ռոմանտիզմի դրսևորումով: 1891 թ. Կարսի եկեղեցում Մինաս Տեր-Պետրոսյան քահանան առավոտյան աղոթքն ավարտելիս հավատացյալներին կոչ է անում անցնել Երկիր և փրկել իրենց արևմտահայ եղբայրներին[66]:

1890-ական թթ. Կարսի մարզի առաջին գործիչներն էին Թևանենց Ալեքը, Հարություն Կիրակոսյանը (Տուրբախ), Արիստակես Տիրոսյանը, Շեկ Հովսեփ Թադևոսյանը, Ավո Ավոյանը, Սերգեյ Նալչաջյանը, Սարգիս Քոթանջյանը, քահանա Հակոբ Կիրակոսյանը, Համազասպ Նորհատյանը, Սեդրակ Գրիգորյանը, որոնք «դեռեւս որեւէ կազմակերպութեան անդամ չէին, գործում էին իբրեւ ազգասէր յեղափոխականներ»[67]: Նրանք կապեր էին հաստատել Կաղզվանի հեղափոխական գործիչներ Զաքար Ալոյանի, բժիշկ Կաճաճյանի և Ալաշկերտի հեղափոխական մարմնի հետ[68]:

1890-1895 թթ. Կարսի մարզում իրենց գործունեությունն են ծավալում նույն նպատակին ձգտող, բայց քաղաքական տարբեր ուժեր ներկայացնող կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնցից շուտով առաջատար դեր է ստանձնում ՀՅԴ-ն:

1891 թ. ռուս-թուրքական սահմանը հատում են 6 փոքրաթիվ խմբեր, որոնց նպատակն էր կապեր հաստատել Երկրի հեղափոխական գործիչների հետ: 1891-1892 թթ. Կարսի մարզում լայն տարածում է ստանում դեպի սահմանամերձ գյուղեր զենքի փոխադրման գործը, որտեղից այն ուղարկվում էր Երկիր: ՀՅԴ-ն Կարսի մարզում և մյուս սահմանամերձ շրջաններում ստեղծել էր զենք ու զինամթերքի ձեռքբերման և կուտակման գործով զբաղվող հատուկ խմբեր, որոնց գործունեությունը կրում էր գաղտնի բնույթ: Զուգահեռ միջոցներ էին ձեռնարկվում Տուլայից զենք ներկրելու և Ալեքսանդրապոլի ռուսական զինապահեստների պարունակությունը «շոշափելու» համար, որի առաջին «մաքրազարդումը» կատարվեց 1894 թ. օգոստոսի վերջին, երբ այնտեղից դուրս բերվեց 300-ից ավելի հրացան և մոտ 60.000 փամփուշտ[69]:

1892 թ. էրզրում է անցնում Տիգրան Օքոնյանը: Նույն թվականին մի քանի ախալցխացի երիտասարդներ. «խմբեր կազմելով Արդահանի, Օլթիի, Նարիմանի ճանապարհով իջել էին էրզրում: Բայց մի քանիսը բռնուել, բանտարկուել էին եւ ռուսական կառաւարութեան միջոցով ազատուել էին, եկել Կարս»[70]: Անհաջողության է մատնվում նաև 1893 թ. գարնանը ռուս-թուրքական

---

[66] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. VI, էջ 237:
[67] Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1936, թիւ 11, էջ 121-122:
[68] Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, 1937, թիւ 12, էջ 129:
[69] Տե՛ս նույն տեղում, յուլիս, 1937, թիւ 9, էջ 150:
[70] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 9, թ. 112:

սահմանն անցած Արաբոյի 16 հոգանոց խումբը, որը մի շարք բախումներ է ունենում քրդերի հետ, որի ընթացքում խմբի բոլոր անդամները զոհվում են[71]:

1893 թ. վերջին Կարսի մարզից էրզրում են անցնում Ղարա-Մելիքը, Քեռին (Արշակ Գավաֆյան), ղարաբաղցի Արշակը և Ջալլադը (Երվանդ Բաբերյան):

1893 թ. փետրվարին Սասունից Կովկաս է անցնում Հնչակյան գործիչ Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան)՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու և Սասուն հասցնելու նպատակով: Թիֆլիսում հանդիպելով անհաջողության՝ Մուրադը մեկնում է Կարս, որտեղ ՀՅԴ Կարսի կ. կոմիտեն նրան տալիս է 12 ոսկի և մի քանի հրացան[72]: «150 մաուզերի եւ 2 միլիոն փամփուշտի փոխարէն 30-ի չափ զէնք եւ 200 հազար փամփուշտով ճանապարհ դրեցինք Մուրատին դէպի Երկիր»[73], - հիշում է Հնչակյան գործիչ, գրող Ատրպետը (Սարգիս Մուբայաճյան): Մուրադը 1893 թ. հունիսին վերադառնում է Մուշ[74]: Նա իրեն տրված 30 զենքերից կարողանում է տեղ հասցնել միայն 8-ից 10-ը[75], ինչը չնչին էր Սասունի կարիքները հոգալու համար:

Զենք ձեռք բերելու նպատակով 1894 թ. Կովկաս են անցնում Հրայր-Դժոխքը (Արմենակ Ղազարյան), Կառնենու Մկրտիչը, ղզլաղաճցի Պողոսը, գոմերցի Հովիկը: ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի աջակցությամբ 1894 թ. ընթացքում զենքերով Երկիր են վերադառնում ղզլաղաճցի Պողոսի 26 հոգանոց խումբը[76], 17 թուրքահայերից բաղկացած մեկ այլ խումբ և շենիկցի Ստեփանի փոքրաթիվ խումբը, որոնք բարեհաջող հասնում են Սասուն:

Հրայրն ու Կառնենու Մկրտիչը Կարսից անցնում են Ռումինիա: Այստեղ Հրայրը հավաքագրում է 50 հոգանոց խումբ և 1894 թ. անցնում Կարս:

1894-1895 թթ. Կարսում ակտիվ գործունեություն են ծավալում Ռոստոմը (Ստեփան Զորյան), Մարտիրոս Մարգարյանը, Տուրբախը, Համազասպ Նորհատյանը, Խաչատուր Բզնունին, Հրայրը և խլաթցի Սերոբ Վարդանյանը (Աղբյուր Սերոբ): Այս գործիչների շրջանում տիրապետող է դառնում այն գաղափարը, որ անհրաժեշտ է «ընտրել մի կէտ եւ այնտեղ կէդրոնացնել մեր ուժերը»[77]: Այն գործնական հողի վրա դնելու համար ՀՅԴ «Զրաբերդ» կ. կոմիտեի նախաձեռնությամբ Երկիր անցնելու նպատակով 1895 թ. կազմավորվում են մի քանի մարտական խմբեր:

1895 թ. հունվարին մի փոքրիկ խմբով ռուս-թուրքական սահմանն անցնում և Սասուն է հասնում Աբրոն (Մկրտիչ Սահակյան)[78]: Թեև Հնչակյան մի խմբի՝ ռուս սահմանապահների հետ ունեցած բախման պատճառով նոր խմբերի սահմանանցումն առժամանակ դադարում է, բայց արդեն 1895 թ. օգոստոսի վերջին Երկիր է անցնում Աղբյուր Սերոբի և Թաթուլի (Արամ Արամյան) միացյալ, 33 հոգանոց խումբը:

Սերոբի խմբի մեկնումից անմիջապես հետո Երկիր է անցնում նաև Հրայր Դժոխքի 32 հոգանոց խումբը, որի կազմում էին նաև Սեպուհը (Արշակ Ներսիսյան)

---

[71] Արաբոյի խմբի մասին տե՛ս «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Ժընեւ, յունուար, 1894, թիւ 6:
[72] Տե՛ս Դիւան…, Ա. հատ., էջ 180, տե՛ս նաև Փափազեան Վ., նշվ. աշխ., Ա. հատ., էջ 33, տե՛ս նաև Ռոստոմ (մահուան վաթսունամեակին առթիւ), էջ 100, տե՛ս նաև Ռոստոմ, Նամականեր (մահուան ութսունամեակին առթիւ), էջ 31:
[73] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 7, թ. 49:
[74] Տե՛ս ԳԱԹ, Ատրպետի ֆոնդ, բաժ. 1, վավ. 9, թ. 22:
[75] Տե՛ս «Դրօշակ», յաւելուած, յուլիս, 1895, թիւ 9, տե՛ս նաև Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1931, թիւ 4, էջ 79:
[76] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 117-118:
[77] Դիւան…, Ա. հատ., էջ 183, նաև՝ Ռոստոմ (մահուան վաթսունամեակին առթիւ), էջ 101:
[78] Տե՛ս «Դրօշակ», 15-ը յուլիսի, 1896, թիւ 17, տե՛ս նաև Ռուբէն, նշվ. աշխ., Գ. հատ., էջ 126-128:

և Անդրանիկ Օզանյանը: Հասնելով Բասեն՝ Հրայրը խմբի հրամանատարությունը հանձնում է ղզլաղաճցի Ասատուրին, իսկ ինքը մնում Բասենում: Խումբն իր երթուղին շարունակում է Իշխու-Հարսնեքար-Խոզլու-Յողուրթլու-Յահյա-Քաղքիկ գյուղերով[79]: 1895 թ. աշնան վերջին խմբի խնուսցի անդամները հաստատվում են Խնուսի գյուղերում, իսկ սասունցի և մշեցի անդամները Սեպուհի ղեկավարությամբ անցնում են Մուշ և Սասուն[80]:

1895 թ. Կարսի մարզից Երկիր են անցնում նաև Հնչակյան Սև Մելքոնի, Տուրբախի, Ջալլադի և Աբրոյի 2-րդ խմբերը, որոնք, հաստատվելով Բասենում, Սասունում, Խնուսում և Խլաթում, ձեռնամուխ են լինում նշված շրջանների հայության ինքնապաշտպանության գործին:

Համիդյան ջարդերի հետևանքով արևմտահայության տնտեսական քայքայումը, ձմռան հետ կապված դժվարություններն ու 1895 թ. վերջերից սահմանամերձ մարզերում հայ հեղափոխականների հանդեպ ցարական իշխանությունների սկսած հալածանքներն արգելք են հանդիսանում նոր խմբերի կազմավորման համար:

1896 թ. հունվարից ՀՅԴ գործիչների շրջանում քննարկման հարց է դառնում Կովկասում և Ատրպատականում արշավախմբեր կազմավորելու և Երկիր առաքելու գաղափարը: Բայց, Վանի հունիսյան ինքնապաշտպանության ձախողման և Բասենի հայդուկային խմբերի ղեկավարներ Հրայր Դժոխքի և Արամ Արամյանի ձերբակալությունների պատճառով Կարսի մարզից դեպի Երկիր նախատեսված արշավանքը չի իրականանում:

1896 թ. նոյեմբերին Ջալլադի խմբի ձախողումից հետո ՀՅԴ «Զրաբերդ» կ. կոմիտեն որոշում է «Առժամանակ դադարեցնել գործը՝ սպասելով աւելի բարեյաջող հանգամանքի…»[81]:

ՀՅԴ Կարսի կ. կոմիտեն 1896-1897 թթ. իր գործունեությունը հիմնակա-նում ուղղում է Ալեքսանդրապոլի կ. կոմիտեի հետ համատեղ զենքի ու զինա-մթերքի հայթայթման և դրանք սահմանամերձ գյուղեր փոխադրելու աշխատան-քին: 1896 թ. 2-րդ անգամ իրականացվում է Ալեքսանդրապոլի զինապահեստի թալանը, որի շնորհիվ հաջողվում է ձեռք բերել 500.000 փամփուշտ:

1897-1899 թթ. Կարսի սահմանամերձ գյուղեր զենքի ու զինամթերքի փո-խադրման գործում իրենց մասնակցությունն են ունենում Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան-Հակոբյան), Կիլիկեցի Ժիրայրը (Հաջի Կարապետ Մխճյան), Ճարտարը (Հակոբ Վարդանյան) և ուրիշներ: Ճարտարին 1897 թ. հաջողվում է 66 հոգանոց խմբով Կարսից մեծ քանակությամբ զինամթերք փոխադրել Խլաթ:

ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովից հետո Կարսի տարածքով Երկիր են անց-նում մի քանի խմբեր: Սևքարեցի Սաքոյի փոքրաթիվ խումբը թեև հասնում է Մուշ, բայց Սաքոն այնտեղ ձերբակալվում է և բանտարկվում: 1898 թ. սեպտեմբերի 2-ին ռուս-թուրքական սահմանն անցած Ճարտարի և Բիթլիսցի Մուշեղի (Մուշեղ Ղպեյան) միացյալ խումբը մի շարք հերոսական կռիվներ է մղում տասնապատիկ ավել թշնամու դեմ[82]: 66 հոգանոց խմբից 23 հոգու է հաջողվում հասնել Նեմրութ:

---

[79] Տե՛ս Անդրանիկի յուշերը, Պէյրութ, 1935, էջ 18-21, տե՛ս նաև Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, յուլիս-օգոստոս, 1943, թիւ 4, էջ 86-88:

[80] Մանրամասն տե՛ս Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1943, թիւ 5, էջ 93-98:

[81] Ջալլադի դատապարտութիւնը, «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1940, թիւ 4, էջ 176:

[82] Այս կռիվների մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 8, գ. 6, թ. 24, 30-33, 38-61, տե՛ս նաև Արշակ, Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն Պիթլիսցի Մուշեղ (1869-1899), Կ. պոլիս, 1919, էջ 23-49, տե՛ս նաև «Դրօշակ», Փարիզ, փետրուար, 1930, թիւ 2:

40-ը զոհվում են, 3-ը՝ ձերբակալվում և բանտարկվում[83]: Անհաջողության է մատնվում նաև Խանի (Բարսեղ Թիրաքյան) 83 մարտիկներից բաղկացած «Շանք» խումբը, որը 1899 թ. հոկտեմբերի 26-ին հերոսական կռիվ է մղում Ալաշկերտի շրջանի Խաստուր գյուղում: Այդ կռվում խմբի կրած կորուստները կազմում են 15 հայդուկ: Իսկ թշնամու կորուստները կազմում էին 350-ից 400[84]: Այնուհանդերձ, զինամթերքի սպառման պատճառով խումբը վերադառնում է Կարս[85]: Խանի հեռանալուց հետո «թուրք զօրքն ու քիւրդ խուժանը կոտորում են Խաստուրի բնակչութիւնը»[86]: Սպանվում են 51 և ձերբակալվում 30 հայեր[87]:

1899 թ. Երկիր անցնելու փորձ է կատարում Հարություն Սիրունյանի 16 հոգանոց խումբը: Սահմանանցումից շատ չանցած այն բախվում է քրդերի հետ և հերոսական կռվում բոլոր հայդուկները զոհվում են[88]:

1897-1901 թթ. Կարսի մարզում խիստ թուլանում է հեղափոխական կազմակերպությունը, մեծ ծավալ են ընդունում խաչագողությունն ու ժողովրդի հանդեպ կատարվող շահատակությունները: «1898-1901 թթ. ընթացքում թէ' Կարս քաղաքում եւ թէ' գաւառներում ըստ երեւոյթին ոչ մի կազմակերպութիւն չկար…»[89], - կարդում ենք ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի 1902 թ. տեղեկագրում:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԶԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1902-1904 ԹԹ.: Գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում քննության են առնվում՝ 1. Կարսի «Հեղափո-խական հնոցը». ՀՅԴ կառույցն ու գործիչները, 2. 1902-1903 թթ. մարզում կազմա-վորված մարտական և զինատար խմբերը, 3. Հակացարական ելույթները և ահա-բեկչությունները մարզում 1903-1904 թթ., 4. Սասունի ինքնապաշտպանությանն օժանդակելու նպատակով 1904 թ. մարզում կազմավորված արշավախմբերը և դրանք զինելու խնդիրը:

1901 թ. հոկտեմբերի 25-ի ընտրություններից հետո ՀՅԴ «Զրաբերդ» նորընտիր կ. կոմիտեն ձեռնամուխ է լինում մարզում խաչագողության երևույթի վերացմանն ու ՀՅԴ կոմիտեների և ենթակոմիտեների կազմավորմանը: Դրա շնորհիվ մարզում կազմավորվում է մի կառույց, որն օրինակ էր հանդիսանում ողջ Անդրկովկասի համար: Կարսի հնոցում թրծված գործիչները «հոն վարժուելով եւ փորձնական դաս առնելով՝ կ'անցնէին Երկիր եւ կը կիրառէին ինչ որ տեսած ու սորված էին»[90]:

Այդ կազմակերպության գլուխ կանգնած էր ՀՅԴ կենտրոնական կոմի-տեն, որը գաղտնի մարմին էր և գործում էր իր նշանակած գործիչների միջոցով: Կ. կոմիտեն ընդունում էր որոշումներ, բայց հասարակության համար մնում էր գաղտնի: Շրջանային ժողովներում այն ներկայանում էր իր ներկայացուցիչների միջոցով: Կ. կոմիտեն իր ենթակայության տակ ուներ կոմիտեներ և ենթակոմիտե-ներ: Կարսի մարզի 79 գյուղական համայնքներից կազմված էր 7 շրջան, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ենթակոմիտեն[91]: Նրա տրամադրության տակ էր գտնվում կ. կոմիտեի նշանակած շրջիկ գործիչը, որը «Կը կատարէր կամ կատա-

---

[83] Տե՛ս Պողոսի յուշերը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, թիվ 2, էջ 22, տե՛ս նաև Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 340:
[84] Տե՛ս «Դրօշակ», յունուար, 1900, թիւ 1:
[85] Տե՛ս Սեպուհ, Խան-Պետրոսը (Բարսեղ Թիրաքեան), «Հայրենիք» ամսագիր, մարտ, 1949, թիւ 3, էջ 27:
[86] Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1938, թիւ 4, էջ 162:
[87] Տե՛ս ՀՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 175, թ. 1-4:
[88] Տե՛ս Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1938, թիւ 6, էջ 135:
[89] Նիւթեր…, Ե. հատ., էջ 121:
[90] Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 46:
[91] Տե՛ս Նիւթեր…, Ե. հատ., էջ 330:

ռել կու տար կոմիտէի որոշումները»[92]: Կարս քաղաքում 1904 թ. գործում էին 121 դաշնակցական խմբեր, որոնցից յուրաքանչ-յուրում միջին հաշվով ընդգրկված էր 15 հոգի: Նույն ժամանակ Կարսում գործում էին նաև Կարմիր Խաչի 13 խմբեր[93], որոնք կազմված էր կանանցից և նրանց գործառույթն էր կուսակցության համար դրամ հավաքելը[94]: ՀՅԴ խմբեր կային նաև մարզի մյուս բնակավայրերում՝ Արդահանում՝ 12, Կաղզվանում՝ 28, Սարի-ղամիշում՝ 23, Օլթիում՝ 13 խմբեր: Դրանք ունեին իրենց Կարմիր խաչի խմբերը[95]:

ՀՅԴ կառույցներում իրենց ուրույն տեղն ունեին շրջիկ գործիչները և Երկիր գնացողները, որոնք «անուն հանած եւ լաւ ատրճանակ ու դանակ բանեցնող անձեր էին»[96]:

ՀՅԴ «Զրաբերդ» կ. կոմիտեի եկամուտի մշտական աղբյուրը կուսակցական ամենամսյա տուրքն էր: Կուսակցության եկամուտի մեծ մասը գոյանում էր նվիրատվություններից, որոնք տրվում էին տարաբնույթ հավաքույթների ժամանակ: Կուսակցական եկամուտների 80 %-ը ծախսվում էր զենքի ու զինամթերքի գնման վրա:

Այս պայմաններում Կարսի մարզը վերստին «յատուկ կարեւորութիւն կը ստանայ՝ իբրեւ Երկրին օժանդակող, ոյժեր եւ ռազմամթերք մատակարարող շրջան»[97]:

Կարսի մարզի ՀՅԴ կառույցներում մեծ դեր էին խաղում շրջիկ-գործիչները: 1902-1904 թթ. այդ գործիչներից աչքի էին ընկնում հատկապես Սարգիս Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան), Իսաջան Առաքելյանը, Թորգոմը (Թուման Թումյանց), Մենակը (Եգոր Առուստամյան), Իշխանը (Նիկողայոս Պողոսյան-Միքայելյան), Հակոբ Չիլինգարյանը, Ռուբենը և Համբարձում Ղարիբյանը (Պլո թագավոր):

Ք. Միքայելյանի ղեկավարությամբ կազմավորված «Փոթորիկ» խմբին օժանդակելու համար 1902 թ. Կարսում կազմավորվում է Խանի գլխավորած «Շանթ» խումբը, որի անդամներն էին Սեպուհը, Սեբաստացի Մուրադը, Մեշեդի Ավետիսը, Գյումուշխանեցի Ավոն, Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Աշոտ Եղիկյանը (Սև Աշոտ) և ուրիշներ[98]: Սահմանից այն կողմ միջոցներ ձեռք բերելու նկատառումով, խումբը 1902 թ. մայիսին փորձում է Ղարա-բողազ-Լսոնք-Կիվ-Դերջան-Դերսիմ գծով անցնել ռուս-թուրքական սահմանը, բայց առատ ձյան և ձնամրրիկի պատճառով կորցնում է ճանապարհը և անարդյունք վերադառնում Կարս[99]:

1902 թ. վերջին ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի հանձնարարությամբ Բասեն է անցնում Մենակը «պատրաստելու այնտեղից դէպի Սասուն գիծը»[100]: Այս ընթացքում Կարսի մարզում Թորգոմի գլխավորությամբ կազմավորվում է 23 հեծյալներից բաղկացած «Մրրիկ» մարտախումբը, որի կազմում ընդգրկված էին Քեռին,

---

[92] Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 51:
[93] Տե՛ս Նիւթեր…, Ե. հատ., էջ 330:
[94] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 49:
[95] Տե՛ս Նիւթեր…, Ե. հատ., էջ 330:
[96] Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 66:
[97] Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, «Դրօշակ», Աթէնք, 10-23-ը փետրուարի, 1994, թիւ 22, էջ 29-30:
[98] Տե՛ս Եղիկեան Ա., Արիւնի ճամբուն վրայ (յեղափոխականի մը յուշատետրէն), Կ. պոլիս, 1911, էջ 232, տե՛ս նաև Սեպուհ (իր կեանքը եւ յուշերը), «Հայրենիք» ամսագիր, մայիս-յունիս, 1944, թիւ 3, էջ 78:
[99] Տե՛ս Մալխաս, Ապրումներ, Ա. հատ., Թեհրան, 1982, էջ 267:
[100] Սեպուհ, Դրուագներ Սասունի կռիւներէն, էջ 6:

Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Գյումուշխանեցի Ավոն, Մեշեդի Ավետիսը, Կայծակ Առաքելը, Տուրբախը և այլ մեծահամբավ մարտիկներ:

Ռուսական իշխանությունները տեղյակ էին «Մրրիկ» խմբի կազմավորմանը, բայց, նրանց չի հաջողվում արգելակել նրա ռազմերթը: Խումբը մայիսի 17-ին անցնելով սահմանը՝ Բասեն-Գոմաձոր-Յաղան գյուղ-Խոզլու (Խնուս)-Բյուրակն լեռ-Խորոնք գյուղ (Մշո դաշտում) երթուղով հունիսի 2-ին հասնում է Սասուն[101]:

Թորգոմի «Մրրիկ»-ին հետևում են Խանի «Կայծակ» և Օնիկ Նևրուզի (Հովհաննես Նևրուզյան) «Շանթ» 142 հոգուց բաղկացած զինատար խմբերը: Սեպտեմբերի 17-ին անցնելով ռուս-թուրքական սահմանը՝ խմբերը եռօրյա հերոսական մարտերից հետո, թշնամուն պատճառելով 800 զոհ, գլխովին ջախջախվում են: Փրկվում են մոտ երկու տասնյակ մարտիկներ, որոնց թվում էր Իշխանը:

Կարսի մարզի հայությունը 1903 թ. իր եռանդուն մասնակցությունն է բերում նաև եկեղեցական գույքի բռնագրավման դեմ հակացարական պայքարին: Պայքարի առաջին ազդանշանը հնչում է Ալեքսանդրապոլից, որին հետևում է Կարսը: Կարսի մարզում ծավալված հակացարական պայքարի գլուխ են անցնում Ա. Մանուկյանը, Հ. Չիլինգարյանը, Տուրբախը, Ալեքսանդրապոլում՝ Պադվալի Վաղոն, Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: 1903 թ. օգոստոսի 24-ին Կարսում եկեղեցական գույքի բռնագրավման օրենքի դեմ խաղաղ ցույց է տեղի ունենում, իսկ 1903 թ. սեպտեմբերի 13-ին Կարսի հայության խաղաղ ցույցը վերածվում է ցուցարարների և ոստիկանության միջև զինված ընդհարման: Մարզում բոյկոտի են ենթարկվում ռուսական դպրոցները, դատարաններն ու հանրային վարչությունները: Փոխարենը ՀՅԴ-ն ստեղծում է իր նմանօրինակ կառույցները: Այդ պայքարն արդյունավետ էր և մեծ դեր խաղաց ժողովրդի շրջանում ՀՅԴ-ի վարկի բարձրացման գործում:

1903-1906 թթ. Կարսի մարզում և հարակից շրջաններում, մեծամասամբ ՀՅԴ նախաձեռնությամբ, տեղի են ունենում մի շարք ահաբեկումներ, որոնց թիրախն էին հայատյաց ցարական պաշտոնյաներ, մատնիչներ ու դավաճաններ:

Դրանց թվում էին թուրք Շերիֆ բեյը[102], Կարսի ժանդարմերիայի պետի թարգման և քաղաքային գրադարանի գրադարանապետ Վասիլի Դրուզդովը[103], գնդապետ Բիկովը[104], Կարսի հաշտարար դատարանի գործավար Արսեն Թուբունջյանը[105], աքսեղազեցի քուրդ Օհան Գլոսնին, Կարսի ոստիկանապետի օգնական Սավանելլին[106], թուրք Շեյխ Հասանը, ղալաջուղցի Մանուկը, Տիկոռ գյուղացի հայտնի մատնիչ Ադըլը[107] և ուրիշներ:

1904 թ. սկզբին ՀՅԴ-ն նախատեսում էր Երկիր ուղարկել մի քանի արշավախմբեր, որոնց զինման համար անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք չկար: Այն ձեռք բերելու համար 1904 թ. հունվարի 7-ին Պադվալի Վաղոյի գլխավորությամբ հերթական անգամ իրագործվում է Ալեքսանդրապոլի ռուսական զինապահեստի թալանը, որի ժամանակ հաջողվում է ձեռք բերել «բերդանկա» հրացանի 437 արկղ փամփուշտ (503.389 հատ), «պիբոդի» տեսակի հրացանի 30 արկղ (30.000 հատ), «սմիթ» և «վիսսոնի» տեսակի ատրճանակի 46 արկղ

---

[101] Տե՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, էջ 55:
[102] Տե՛ս «Դրօշակ», սեպտեմբեր, 1903, թիւ 8:
[103] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 4, թ. 2907-2909, տե՛ս նաև Նիւթեր…, Ե. հատ., էջ 330, տե՛ս նաև Ակնունի էդ., Դէպի կռիւ, Ժընեւ, 1904, էջ 265:
[104] Տես «Հայրենիք», ազգային շաբաթաթերթ, Պոսթըն, 5-ը նոյեմբերի, 1904, թիւ 278:
[105] Տե՛ս «Հնչակ», կէդրոնական օրգան Հնչակեան կուսակցութեան, Փարիզ, դեկտեմբեր, 1904, թիւ 12:
[106] Տե՛ս «Մշակ», քաղաքական-գրական ամենօրեա լրագիր, Թիֆլիս, 5-ը մարտի, 1905, թիւ 35:
[107] Տե՛ս Ա. Ազնաուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1938, թիվ 1, էջ 148-149:

(66.240 հատ), նաև 30.115 հատ տարբեր տեսակի փամփուշտ[108]: Այդ ավարը մեծամասամբ պահեստավորվում է Կարսի մարզի ՀՅԴ զինապահեստներում:

1904 թ. հունվարի 31-ին Սոֆիայում բացվում է ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովը: Նրա քննարկած հարցերից և ընդունած որոշումներից ՀՅԴ «Ձրաբերդ» կ. կոմիտեի համար կարևորվում էին ահաբեկչությանը, արշավախմբերին, զինմանը և կովկասահայության ինքնապաշտպանությանը վերաբերող հարցերը:

Վերջին հարցի վերաբերյալ ժողովը ընդունում է «բերանացի եւ գրաւոր պրոպագանդի, տեռորի, ժողովրդական ցոյցերու եւ զինուած դիմադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հողի վրայ»[109]:

Ժողովը հանձնարարում է ՀՅԴ Կարսի և Երևանի կ. կոմիտեներին՝ «I. Ձիաւոր խմբով կամ որեւէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ռումբեր, հրացանի մասեր, բերդանի զիլզէներ, 50.000 մոսինի եւ բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ: II. Սասնոյ շարժումները սկսելուն պէս… ձայնակցիլ եւ օժանդակել Երկրի շարժումին՝ …թէ սահմանի վրայ, թէ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ…»[110]:

Խիստ հրատապ էր դեպի Երկիր զենք ու զինամթերք փոխադրելու գործի անվտանգ կազմակերպումը: Այս հարցը քննարկվում է 1904 թ. ապրիլի 5-12-ին Ալեքսանդրապոլում գումարված ժողովում, որը որոշում է. «Փոխադրութիւնները կատարել 1. ժողովրդի միջոցով՝ հանգրուանէ հանգրուան, 2. Օտարների միջոցով՝ վճարով, 3. Ապրանքների միջոցով, 4. Ֆետայական խմբերով»[111]:

Ընդհանուր ժողովի ավարտից հետո՝ Աշոտ Երկաթը (Արմենակ Լևոնյան) և Կայծակ Վաղարշակը (Վաղարշակ Բաղդասարյան) վերադառնում են Կովկաս՝ նոր արշավախմբեր կազմակերպելու համար:

Ալեքսանդրապոլում գումարված վերը նշված ժողովը խմբերի Երկիր անցնելու համար նպատակահարմար է համարում Տաք աղբյուրի գիծը: Դրան հակառակ՝ խիստ անցնպատակահարմար է համարվում Կարսից անցնող գծերը, ուստի այդ առթիվ որոշվում է. «Անմիջապէս մարդիկ ուղարկել ուսումնասիրելու եւ բանալու հին ու նոր գծերը»[112]: Բայց, չնայած ձեռնարկված միջոցներին, Կարսի գիծն իրեն չի արդարացնում:

1904 թ. մայիսին Կարսի Բերնա և Դոլբանդլու գյուղերում կազմավորվում և հունիսի 6-ին ռուս-թուրքական սահմանն անցնում է Կայծակ Վաղարշակի 29 հոգանոց «Դժոխք» հեծյալ խումբը: Այն հաջորդ օրը Ձիվինի բերդում խոշոր ընդհարում է ունենում թուրք-քրդական 4000-անոց զորքի հետ: Զոհվում են խմբի 12 մարտիկներ, իսկ ռուսական սահման վերադառնալուց՝ ևս 13 հոգի թիրախ են դառնում ռուս սահմանապահների համար:

1904 թ. հունիսի 25-ին Կարսի մարզից Երկիր անցած Բաբկենի (Պողոս Գրիգորյան-Ավագյան) 19 հոգանոց Հնչակյան «Արծիվ» խումբը հունիսի 28-ին հարձակում է գործում Ուչքիլիսա գյուղում տեղակայված թուրքական զորանոցի վրա: Սպանելով շուրջ 60 թուրք զինվորների, խումբը Նպատ լեռան և Սև սարի վրա մի շարք հերոսական մարտեր է մղում տասնապատիկ ավելի թուրքական զորքերի դեմ և գլխովին ջախջախվում:

1904 թ. հուլիսի 2-ին Օլթի-Ղարաբողազ (կիրճ Օլթիի շրջանում)-Պուլիկ աղբյուր-Նարիման-տաճկական Բասեն գծով Երկիր է անցնում Թորգոմի 61

---

[108] Տե՛ս «Հայրենիք» շաբաթաթերթ, 6-ը օգոստոսի, 1904, թիւ 265, 14-ը յունուարի, 1905, թիւ 288:
[109] Նիւթեր…, Բ. հատ., էջ 119:
[110] Նույն տեղում, էջ 111:
[111] Նույն տեղում, էջ 195:
[112] Նույն տեղում:

հոգուց բաղկացած «Որսկան» խումբը: ՀՅԴ բյուրոն և Կար-սի կ. կոմիտեն հրահանգել էին խմբին՝ «ամէն կերպ խուսափել ռուս զօրքերի հետ ընդհարուելուց, աւելին, նոյնիսկ այն դէպքում, երբ ռուս սահմանապահ զօրքերը կրակ բանային խմբի վրայ, նրանք չպէտք է պատասխանէին»[113]: Անփութության հետևանքով Զարդանիսի աղբյուրի մոտ խումբը նկատվում է ռուս զինվորների կողմից, որոնք շրջապատում են հայդուկներին՝ միաժամանակ լուր տալով թուրք սահմանապահներին: Ամբողջ օրը խումբը հերոսական կռիվ է մղում թուրքական զորքի դեմ՝ միաժամանակ ոչ մի գնդակ չարձակելով ռուսների ուղղությամբ, որոնք անխնա կոտորում են հայ մարտիկներին: Գնդապետ Բիկովը ձերբակալում է իր մոտ ուղարկված 3 պատգամախոսներին, իսկ Տեր-Ղազար քահանային Բիկովի հրամանով սպանում են դեռ տեղ չհասած[114]: Թորգոմը դիմում է վերջին միջոցին՝ 10-15 մարտիկներով, առանց զենքի, անձնատուր լինելու նպատակով մոտենում է ռուսական դիրքերին, բայց ռուսները կրակ են բացում նրանց ուղղությամբ: «Որսկան» խմբից սպանվում են 32, վիրավորվում՝ 6, ձերբակալվում և բանտարկվում՝ 14, փախչելով ազատվում՝ 9 հոգի[115]:

«Որսկան» խմբի տմարդի բնաջնջումը մեծ վրդովմունք է առաջացնում հայության շրջանում: ՀՅԴ Կարսի կ. կոմիտեն որոշում է. «Թումանի եւ իր խումբի վրեժը առնել թէ' ռուսներէն եւ թէ' տաճիկներէն»[116]: Կազմվում է 7 հոգանոց մի խումբ, որը, անցնելով սահմանը, ռումբերով հարձակվում է թուրքական զորանոցների վրա ու վնասներ պատճառում[117]: Իսկ 1904 թ. օգոստոսի 31-ին (ն. տ. սեպտեմբերի 13-ին) Համո Ջանփոլադյանը Օլթիում գնդակահարում է գնդապետ Բիկովին և դիմում փախուստի[118]:

1904 թ. աշնանը Կարսի մարզում ստեղծված աննպաստ պայմաններից ելնելով՝ մարզից հեռանում և Երևանի ու Ատրպատականի գծով Երկիր են անցնում Իշխանը, Արամը, Ռուբենը և ուրիշներ: Շատերի պես, Արամի համար ևս պարզ էր դարձել, որ անհնար է զինատար խմբերով օգ-նություն ցույց տալ արևմտահայությանը: Այս կարծիքին էին նաև Իշխանը, Նիկոլ Դումանը և այլ գործիչներ: Արշավախմբերի հանդեպ փոխված մոտեցումն իր ար-տացոլումն է գտնում նաև ՀՅԴ շրջանային ժողովներում, ՀՅԴ Խորհրդում և ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում: Վերջինիս 73-րդ նիստում Արամը զեկուցագիր է կարդում արշավախմբերի մասին՝ նշելով դրանց ձախողման պատճառներն ու հետևանքները: Նա առաջարկում է հրաժարվել նոր արշավախմբերի գաղափա-րից: Արամի զեկուցումը և առաջարկը բուռն քննարկում է առաջացնում ընդհա-նուր ժողովի մասնակիցների շրջանում: Ի վերջո, ժողովն ընդունում է հետևյալ որոշումը. «Ապագայում Թիւրքահայաստանում մեր մղելիք կռուի մէջ այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին արշաւախմբերը եւս օգտակար կարող են լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ դա կռիւը կը դարձնէ ազդու, լայն եւ յարատեւ…»[119]:

Կարծում ենք միանշանակ սխալ էր արշավախմբերում մեծ թվով մար-տիկների ընդգրկումը, որի հետևանքով արշավանքը դեռ չսկսած՝ լրտեսների միջոցով ռուսական և թուրքական սահմանապահ զորամասերին հայտնի էին

---

[113] Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1938, թիւ 9, էջ 141:
[114] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 25, թ. 3, տե՛ս նաև Արմէնի յուշերը, գրի առաւ՝ Արամ Ալչուճեան, «Հայրենիք» ամսագիր, մայիս-յունիս, 1945, թիւ 3, էջ 45:
[115] Տե՛ս «Դրօշակ», օգոստոս, 1904, թիւ 8:
[116] Ռուբէն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 354:
[117] Տե՛ս նույն տեղում:
[118] Տե՛ս «Հայրենիք» շաբաթաթերթ, 5-ը նոյեմբերի, 1904, թիւ 278:
[119] Նիւթեր…, Գ. հատ., էջ 204:

դառնում այդ խմբերի քանակն ու երթուղին, որոնք էլ համապատասխան միջոցներ էին ձեռնարկում նրանց սահմանանցումը կանխելու համար: Առավել նպատակահարմար էր արշավախմբերում ընդգրկել այնպիսի անհատների, որոնք ունեին ռազմական փորձ ու մարտական հմտություն: Սխալ էր նաև 1903-1904 թթ. տիրող այն մտայնությունը, որ անհրաժեշտ է Երկրին օգնել 1-2 մեծաքանակ խմբերով: Այս պարագայում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ նման խմբերը անխուսափելիորեն նկատվելու էին թուրք-քրդական զորքերի կողմից, որի արդյունքում կռիվը տասնապատիկ ուժերի դեմ դառնալու էր անխուսափելի, ինչն էլ հանգեցնելու էր խմբերի և զենքերի կորստին: Սրա կողքին չպետք է մոռանալ նաև, որ այդ շրջանում արշավախմբերի հարցում միանշանակ դրական էր արևելահայ հասարակության վերաբերմունքը, որն ամեն կերպ օժանդակում և մասնակցում էր դրանց կազմակերպմանը: Միշտ էլ արշավախմբերի կազմում ընդգրկվել ցանկացողների թիվը գերազանցում էր մասնակիցների թվաքանակին: Այդ ամենով հանդերձ արշավախմբերի կազմակերպումն ունեցավ բացասական հետևանքներ՝ 1. Իրենց նպատակին չհասան և ջախջախվեցին այն մարտական խմբերը, որոնք այլ պարագայում կարող էին նշանակալից դեր խաղալ հայ ազատագրական պայքարում: 2. Ուժեղացավ ռուս-թուրքական սահմանի հսկողությունը, որը գրեթե անհնարին դարձրեց Կարսի մարզից զենքի փոխադրումը Երկիր: 3. Ավելի զգուշավոր և ուշադիր դարձան թուրքական սահմանապահներն ու քրդական աշիրեթները, որոնք առիթը բաց չէին թողնում՝ կողոպտելու և ավերելու հայկական գյուղերը: 4. Արշավախմբերի կազմակերպումն ու զինումը հայ քաղաքական ուժերից խլում էին հսկայական նյութական միջոցներ, որոնք կարելի էր օգտագործել արևմտահայությանը զինելու կամ այլ նպատակներով:

ԳԼՈՒԽ 4. ՀՅԴ «ՋՐԱԲԵՐԴ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1905-1908 ԹԹ.: Ժամանակագրական առումով սկսվում է 1904 թ. օգոստոսին կայացած ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի ընտրություններով և ավարտվում 1908 թ.՝ արևմտահայ ազատագրական պայքարի դադարեցմամբ:

1904 թ. օգոստոսի 15-18-ը կայացած ՀՅԴ Կարսի շրջանային ժողովն ընտրում է նոր կ. կոմիտե: Ժողովը նաև որոշում է՝ 1. Գյուղական երիտասարդներից կազմել զինվորական ուժ, 2. Կարսի մարզում շարունակել դատավարական գործունեությունը, 3. ՀՅԴ Արևելյան բյուրոյից խնդրել «աւելի մեծ թուով ինտիլիգենտ շրջիկներ…»[120]:

1904 թ. դեկտեմբերի 10-ին Թիֆլիսում բացված ՀՅԴ Արևելյան մարմինների 4-րդ շրջանային ժողովին ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի տված հաշվետվությունն արտացոլում էր 1904 թ. բուռն իրադարձություններից հետո մարզում առկա իրավիճակը: Այսպես, ՀՅԴ «Ջրաբերդ» կ. կոմիտեն իր տրամադրության տակ ուներ 112 «մոսին», 49 «բերդանկա» տեսակի հրացաններ, 30.000 «բերդանկա» և 33.000 «մոսին» տեսակի հրացանների փամփուշտներ, 27 հատ ձի: Կարս քաղաքում ՀՅԴ-ն ուներ կ. կոմիտե և 121 դաշ-նակցական խումբ, վաճառականների 13 խումբ, Կարմիր խաչի կոմիտե՝ 13 խմբից բաղկացած, 28 դպրոց, դատաստանական մարմին, իսկ շրջանային 4 կոմիտեներում ընդհանուր առմամբ կար 76 խումբ, զինվորական և Կարմիր խաչի խմբեր[121]:

Մարդկային և նյութական նման ռեսուրսներով իր գործունեությունը սկսած Կարսի նորընտիր կ. կոմիտեն իրեն չի արդարացնում: Այս մասին նույն մարմնի 1906 թ. տեղեկագրում կարդում ենք. «1905 թ. վերջերից սկսած ոչ մի

[120] Նույն տեղում, Ե. հատ., էջ 130:
[121] Տե՛ս նույն տեղում, Բ. հատ., էջ 206:

ուժեղ, գիտակից ու գործին նուիրուած կազմ չէ եղել…»[122]: Հեղափոխական գործի անկումը հետևանք էր 1904-1906 թթ. մարզում տեղ գտած այնպիսի երևույթների, ինչպիսիք էին՝ 1. ՀՅԴ քարոզչության բացակայությունը, 2. ՀՅԴ կոմիտեների դատաստանական գործերով չափից շատ տարվելը, 3. Խաչագողերի և ավազակախմբերի թվի մեծացումը, 4. ՀՅԴ կոմիտեներից ձեռնհաս անձանց հեռանալը, 5. Հայ-թաթարական բախումների շրջանում ՀՅԴ-ի կողմից համեմատաբար խաղաղ Կարսի մարզի անտեսումը, 6. Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ձախողման հետևանքով Կարսի՝ Երկրի համար ունեցած նշանակության թուլացումը:

1904-1908 թթ. Կարսի մարզում գործունեություն են ծավալում Համազասպ Նորհատյանը, Երվանդ Համամջյանը, Խաչատուր Բզնունին, բժիշկ Կարապետ Ղազանչյանը, Սև Կարոն, Նիկոլ Աղբալյանը, Ավետիս Ահարոնյանը (Ղարիբ), Ռոստոմը, Սվազցի Բիձան (Հարություն), Վահան Ջալլադյանը և ուրիշներ:

Մարզում տիրող անիշխանության պայմաններում հայության համար հատկապես չարիք էին դարձել գործող ավազակախմբերը, որոնք շատ անգամ հրապարակավ գողություններ և թալան էին իրականացնում և մնում անպատիժ:

Նման պայմաններում 1905-1907 թթ. մարզում ՀՅԴ կոմիտեների գործունեության առանցքն է դառնում երիտասարդությանը ռազմականորեն կազմակերպելու գործը: Ռուսական բանակում ծառայած հայ զինվորների ղեկավարությամբ երիտասարդությունից ստեղծվում են թռուցիկ խմբեր, որոնք կապ էին պահպանում մարզի պետական, ոստիկանական մարմինների հայ անդամների հետ:

Կուսակցության եկամուտները նախորդ տարիների համեմատ նվազել էին, իսկ «եղածը կը կատարուէր ինքնաբերաբար եւ ջանք չէր թափուիր աւելացնելու…»[123]:

1905-1907 թթ. Կարսի մարզից Երկիր զենք փոխադրելու գործը իրականացվում էր նախկինում որդեգրված այսպես կոչված «ծծման» մեթոդով: Զենքն ու զինամթերքը Երկիր էր փոխադրվում գյուղից գյուղ՝ շալակավորների միջոցով: Այս ձևով 1905-1907 թթ. Կարս-Բյուրակն գծով որոշ քանակությամբ զենք ու զինամթերք է փոխադրվում Երկիր: Բայց, 1909 թ. մարզի ՀՅԴ զինապահեստներում տիրող իրավիճակը բոլորովին անմխիթարական էր: Այդ մասին օգոստոսին Վառնայում կայացած ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկագրում նշվում է՝ «1. Պահեստների դրութիւնը գաղտնապահութեան տեսակէտից թոյլ, 2. Զէնքերի դրութիւնը՝ ոչ բաւարար, 3. Հաշուի մէջ խոշոր տարբերութիւն…, 4. Նայած …իւր գործողութեան՝ ծախքը համեմատաբար շատ…»[124]:

1905 թ. սկզբին Կարսի մարզից Երկիր է անցնում ՀՅԴ Բաքվի կ. կոմիտեի կողմից կազմավորված Հակոբ Զավրիյանի «բժիշկների» խումբը, որի նպատակն էր «տարագիրներին օգնելու նպատակով Մուշ քաղաքում հիվանդանոց բացել»[125]: ՀՅԴ-ն Զավրիյանի խմբի կազմում Երկիր է ուղարկում նաև որոշակի զինվորական ուժեր[126]: Բայց, շատ չանցած, թուրքական կառավարության պահանջով խումբը վերադառնում է Կովկաս:

1905 թ. Կովկասում սանձազերծվում են հայ-թաթարական բախումներ: ՀՅԴ Արևելյան բյուրոյի հրահանգով Կարսի կ. կոմիտեն կարգադրում է տեղական

---

[122] Նույն տեղում, Ե. հատ., էջ 143:
[123] Ռուբէն, նշվ. աշխ., Զ. հատ., էջ 23:
[124] Նիւթեր…, Զ. հատ., էջ 466:
[125] Ստեփանյան Գ., Բաքվի հայությունը և Սասունի 1904 թ. հերոսամարտը, «Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ)», մայիս-օգոստոս, 2008, թիվ 2, էջ 8:
[126] Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1924, թիւ 1, էջ 128-129:

կառույցներին «հայ-թաթարական ընդհարումների առիթ չտալ, իսկ թաթարների յարձակման դէպքում ինքնապաշտպանութեան դիմել»[127]: Շնորհիվ խելամիտ գործելակերպի, մարզում 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումներ չեն արձանագրվում:

1905 թ. ապրիլին Ժնևում կայացած ՀՅԴ Խորհուրդը որպես ՀՅԴ գործունեության ուղեցույց ընդունում է «Կովկասյան նախագիծը», որը մեծ իրարանցում է առաջացնում Կարսի մարզում: ՀՅԴ շատ հայտնի մարտիկներ դեմ են արտահայտվում «Կովկասյան նախագծին»: Արևմտահայերի շրջանում էլ տարածում է գտնում այն համոզմունքը, թե «Հ. Յ. Դաշնակցութիւնը մոռացութեան է մատնել տաճկահայ դատը»[128]:

1905 թ. վերջին տեղի են ունենում ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի նոր ընտրություններ: Նորընտիր կ. կոմիտեն միջոցներ է ձեռնարկում մարզում անիշխանությունը վերացնելու համար: Կազմում է մի բանաձև-առաջարկ, որը ներկայացվում է ՀՅԴ Արևելյան բյուրոյին: Վերջինս անուշադրության է մատնում այդ ուշագրավ փաստաթուղթը: Այնուհանդերձ, 1907 թ. փետրվար-մայիսին Վիեննայում գումարված ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը Կարսի մարզի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումը. «Աւարառութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս եւ անարխիայի առաջն առնելու համար կազմակերպել եւ իրար շաղկապել գիւղերը»[129]:

Ընդհանուր ժողովից անմիջապես հետո Կարսի մարզում միջոցառումներ են ձեռնարկվում անիշխանական դրության վերացման ուղղությամբ: Առաջին քայլն Առյուծ Ավագի ահաբեկումն էր: Այնուհետև ՀՅԴ Կովկասի ահաբեկիչ մարմինն ավազակախմբերից պահանջում է «անմիջապէս հեռանալ այդ շրջանից»[130]: ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ մարզում տիրող անիշխանության դեմ պայքարելու համար Կարս է ուղարկվում մի խումբ, որը, սակայն, սկսում է զբաղվել շանտաժով[131]: Հարցը քննարկվում է ՀՅԴ Արևելյան բյուրոյի շրջանային ժողովի 1909 թ. հունվարի 2-ի նիստում: Որոշվում է անիշխանության դեմ գյուղերում պայքարել «գիւղացիական միութիւնների միջոցով», իսկ քաղաքներում պայքարել միայն այն դեպքում, երբ «վտանգի է ենթարկւում մեր (ՀՅԴ – Կ. Հ.) կազմակերպւած մասսան իբրեւ ամբողջութիւն» և երբ «շանտաժը կատարւում է Դաշնակցութեան անունից կամ դաշնակցական անդամների ձեռքով…»[132]:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի կողմից վավերականություն ստացած «Կովկասյան նախագիծը» առիթ է հանդիսանում որպեսզի ցարական իշխանությունները 1908 թվականից ՀՅԴ-ի դեմ զանգվածային հալածանքներ սկսեն: Փակվում են ՀՅԴ կողմից տպագրվող թերթերը, հրատարակությունները, արհմիությունները, արգելվում հանրահավաքները, ձերբակալվում ՀՅԴ շատ հայտնի գործիչներ: «…Խուզարկութիւնները լայն չափեր ստացան, բանտերը լցուեցին: Հայ ժողովրդի ինտիլիգենցիան եւ բուրժուազիան՝ վաճառականութիւն, գործատերեր, խմբագիր, ուսուցիչ, գիւղացի, բոլորն էլ պետական հանցագործներ հռչակուեցին եւ իբրեւ դաշնակցականներ բանտ նետուեցին»[133]:

Կարսի գործիչներից այս գործով ձերբակալվում են ՀՅԴ «Զրաբերդ» կ. կոմիտեի անդամներ Համազասպ Նորհատյանը, Խաչատուր Բզնունին, ՀՅԴ

---

[127] Ա. Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1938, թիւ 2, էջ 118:
[128] Նիւթեր…, Ե. հատ., էջ 150:
[129] Նույն տեղում, Գ. հատ., էջ 262:
[130] Նույն տեղում, Ե. հատ., էջ 366:
[131] Տե՛ս նույն տեղում, Է. հատ., էջ 168:
[132] Նույն տեղում, էջ 169-170:
[133] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, թ. 2-3:

գործիչներ Հակոբ Չիլինգարյանը, Արամայիս Ազնավուրյանը, Համբարձում Ղարիբյանը, Մինաս Վարդանյանցը, Սահակ Ղարիբյանը, Ամիրխան Գասպարյանցը, Կաղզվանի կոմիտեի անդամ Գարեգին Հեքիմյանցը, Աբրահամ Սարգսյանցը, Հովո Պողոսովը[134] և ուրիշներ:

Բոլոր ձերբակալվածները մեղադրվում էին «Դաշնակցություն կուսակցության հանցավոր ընկերությանը մասնակցության մեջ. ընկերություն, որն իր առջև խնդիր էր դրել ռուսական պետության մեջ հասարակական կարգի տապալման միջոցով դաշնային, ժողովրդավարական հանրապետություն հիմնելու»[135]: ՀՅԴ-ն մեղադրվում էր նաև հայ բնակչությունից ամենամսյա տուրք հավաքելու, մեծահարուստներից ստիպողական ձևով գումարներ կորզելու, մերժում ստանալու դեպքում՝ նրանց սպանելու, իրեն դատական իշխանության իրավասություն վերապահելու, քրեական և քաղաքացիական գործեր քննելու[136], մի շարք ցարական պաշտոնյաների ահաբեկելու[137] և այլ հանցանքների մեջ:

Պետերբուրգում 1912 թ. հունվարին սկսված դատավարությունից առաջ ՀՅԴ-ին հաջողվում է մեջտեղից վերացնել մի շարք իրեղեն ապացույցներ, ինչպես նաև մեղադրող կողմի գլխավոր վկա խմբապետ Միհրանին: Այս և այլ, այդ թվում՝ քաղաքական, հանգամանքներ ստիպում են դատարանին 1912 թ. մարտին կայացնել անհամեմատ մեղմ դատավճիռ՝ 159 մեղադրյալներից 94-ին ազատ արձակել, իսկ 52-ի նկատմամբ ընդունել կարճաժամկետ բանտարկության և աքսորի որոշումներ[138]: Այնուհանդերձ, Կարսի գործիչներից Համբարձում Ղարիբյանը դատապարտվում է տաժանակիր աշխատանքի, իսկ Հակոբ Չիլինգարյանը 1912 թ.՝ մինչև դատավարության ավարտը, ծանր հիվանդությունից մահանում է Վլադիկավկազի բանտում[139]:

1908-1911 թթ. ձերբակալությունները և հալածանքները լուրջ հարված հասցրին ՀՅԴ կովկասյան մարմիններին: ՀՅԴ Արևելյան բյուրոյի 1910 թ. հոկտեմբերի 2-13-ը էրզրումում կայացած շրջանային ժողովում այս մասին նշվում է. «Զրաբերդի, ինչպես նաեւ մնացած համարեայ բոլոր վայրերու մէջ ալ գոյութիւն չունին լուրջ կազմակերպութիւններ…»[140]: Իսկ ՀՅԴ 6-րդ ընդհանուր ժողովի մի տեղեկագրում Կարսի մարզի ՀՅԴ կառույցների մասին կարդում ենք. «Բոլորովին քայքայուած է, ոչ քաղաքում, ոչ էլ գիւղերում՝ ոչինչ չկայ»[141]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ներկայացնելով հայ ազատագրական պայքարում Կարսի մարզի հեղափոխական կառույցների դերը և 1880-1908 թթ. ծավալած գործունեությունը՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. 1880-ական թթ., երբ կովկասահայ երիտասարդության շրջանում արմատավորվեց «դեպի Երկիր» կարգախոսը, Ռուսաստանին միացած նորակազմ Կարսի մարզը սկզբից ևեթ իր վրա բևեռեց դեպի Արևմտյան Հայաստան մղվող հեղափոխական երիտասարդության, մի փոքր ուշ՝ նաև քաղաքական կուսակցությունների ուշադրությունը: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, այն Ռուսական կայսրության երկու վարչական միավորներից մեկն էր, որն անմիջա-

---

[134] Տե՛ս «Վէմ (համահայկական հանդես)», յուլիս-սեպտեմբեր, 2011, թիւ 3, էջ 231-233, 238-239, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 184, 186, 188, 193, 195, 197:
[135] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 493, 496, նաև՝ «Վէմ», հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 208:
[136] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 493, 496:
[137] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 68, թ. 7, տե՛ս նաև «Վէմ», հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 206-207:
[138] Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 532, տե՛ս նաև Անանուն Դ., նշվ. աշխ., հատ. երրորդ, էջ 327:
[139] Տե՛ս «Վէմ», յուլիս-սեպտեմբեր, 2011, թիւ 3, էջ 231, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 209:
[140] Նիւթեր…, Ը. հատ., էջ 170:
[141] Նույն տեղում, Թ. հատ., էջ 192:

կանորեն սահմանակից էր Արևմտյան Հայաստանին և այդ առումով ոչ միայն կարևոր հանգրվան էր Երկիր մտնող արշավախմբերի ու մարտական խմբերի համար, այլև զենք ու զինամթերքի ձեռքբերման, դրանց պահեստավորման, մարտական ու զինատար խմբերի կազմավորման կենտրոնավայր:

2. Գիտակցելով ազատագրական պայքարի համար Կարսի մարզի կարևորությունը՝ հայ ազգային կուսակցությունները 1890-ական թվականներին այստեղ ստեղծում են իրենց կառույցները, որոնք ոչ միայն զբաղվում էին զինատար ու մարտական խմբեր կազմելով և Երկիր ուղարկելով, այլև՝ տեղի հայ բնակչության կազմակերպմամբ:

3. 1890-ական թթ. Կարսի մարզից Երկիր անցած անհատների ու խմբերի հիմնական մասը ջախջախվել են սահմանագլխին կամ ձերբակալվել թուրքական իշխանությունների կողմից: Մինչդեռ 1893-1895 թթ. մարզից բարեհաջող Երկիր են անցել մի շարք խմբեր, որոնք իրենց մասնակցությունն են բերել արևմտահայության ինքնապաշտպանության գործին:

4. Կարսի մարզը տարիներ շարունակ եղել է զենքի ու զինամթերքի պահեստավորման և դրանք Երկիր փոխադրելու հենակետերից մեկը: Նրա զինապահեստները համալրվում էին ոչ միայն Տուլայից և այլ վայրերից փոխադրված զենք ու զինամթերքով, այլև տեղում՝ հատկապես Ալեքսանդրապոլի պետական զինապահեստի մաքրագործման արդյունքում ձեռք բերված միջոցներով: Գաղտնի պահեստներում պահվող զենքն ու զինամթերքը զինատար խմբերի կամ հայ ու քուրդ շալակավորների միջոցով փոխադրվում էին Արևմտյան Հայաստան:

5. 1897-1901 թթ., արևմտահայ ազատագրական պայքարի ժամանակավոր վայրէջքի պայմաններում, մարզում թուլանում է հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը և ի հայտ են գալիս անցանկալի երևույթներ՝ բնակչության հարստահարություն, խաչագողություն և այլն: Միաժամանակ ձախողվում են մարզից Երկիր անցած գրեթե բոլոր զինատար և մարտական խմբերը:

6. Կարսի մարզի հեղափոխական կազմակերպություններն աննախընթաց վերելք են ապրում 1902-1904 թթ., երբ ՀՅԴ-ին հաջողվում է ոչ միայն վերացնել մարզում տիրող անիշխանությունը, այլև ստեղծել Կովկասում իր նախադեպը չունեցող հեղափոխական կառույց:

7. Սասունի ինքնապաշտպանությանն օժանդակելու նպատակով 1903-1904 թթ. մարզում կազմավորված խմբերը, բացառությամբ «Մրրիկ» մարտախմբի, անհաջողության են մատնվել և կրել մարդկային ուժի մեծ կորուստներ: Այդ պատճառով դրանց հետագա կազմակերպումը դադարեցվել է:

8. 1903-1905 թթ. Կարսի մարզի հայությունը եռանդուն մասնակցություն է ունենում եկեղեցական գույքի բռնագրավման դեմ: Դրա, արշավախմբերի ձախողման և այլ պատճառներով 1903-1906 թթ. մարզում ՀՅԴ-ի կողմից իրականացվում են նաև ցարական հայատյաց պաշտոնյաների ու զինվորականների, մատնիչների ու դավաճանների մի շարք ահաբեկումներ:

9. Ինչպես Կովկասի այլ շրջաններում, Կարսի մարզում ևս մեծ իրարանցում է առաջ բերում ՀՅԴ Խորհրդի կողմից ընդունված «Կովկասյան նախագիծը»: Մարզում հանգրվանած արևմտահայերի միջավայրում այն գնահատվում է որպես արևմտահայ ազատագրական պայքարից հրաժարվելու ծրագիր և առաջ բերում բուռն դժգոհություններ:

10. Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության պարտությունը, ռուսական հեղափոխության ազդեցության ներքո համառուսական խնդիրների առաջին պլան մղվելը և մի շարք այլ հանգամանքներ էապես թուլացնում են մարզի

հեղափոխական կառույցների ակտիվ մասնակցությունն արևմտահայ ազատագրական պայքարին: Իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը վերջ է դնում այդ պայքարին:

11. Վերը նշված երևույթների, նաև այլ պատճառների հետևանքով մարզում նկատվում է հեղափոխական գործի հետընթաց և ՀՅԴ կառույցների թուլացում: Իսկ ՀՅԴ-ի դեմ ցարական իշխանությունների՝ 1908-1911 թթ. ծավալած հարձակման շրջանում մարզում իրականացված մեծաթիվ ձերբակալությունների հետևանքով տեղի ՀՅԴ կառույցները քայքայվում են:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. **Հակոբյան Կ.**, Խանի «Կայծակ» և Օնիկ Նևրուզի «Շանթ» զինատար խմբերի սահմանանցումը, «Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես)», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, թիվ Բ., էջ 195-206:
2. **Հակոբյան Կ.**, Կարսի մարզից Երկիր անցած խմբերն ու դրանց դերը արևմտահայերի ինքնապաշտպանության գործում 1892-1895 թթ., «Բան-բեր Հայաստանի արխիվների», Երևան, ՀԱԱ, 2012, թիվ 1-2, էջ 172-183:
3. **Հակոբյան Կ.**, ՀՅԴ Կարսի ու Ալեքսանդրապոլի Կենտկոմների գործունեությունը զենք ու զինամթերք հայթայթելու և Երկիր փոխադրելու ուղղությամբ (1892–1908 թթ.), «Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես)», Երևան, 2013, թիվ Ա., էջ 108-119:
4. **Հակոբյան Կ.**, Թորգոմի «Որսկան» խումբը և նրա ազդեցությունը ազա-տամարտի հետագա մարտավարության վրա, «Էջմիածին (պաշտօնական ամսագիր ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր աթոռոյ սրբոյ էջմիածնի)», Վաղարշապատ, օգոստոս, 2013, թիւ Ը, էջ 54-69:
5. **Հակոբյան Կ.**, ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի գործունեությունը 1904-1912 թվականներին, «Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես)», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, թիվ Բ., էջ 133-151:
6. **Հակոբյան Կ.**, Ռուս-թուրքական սահմանն անցած առաջին կամավորական խմբերի ազդեցությունը արևմտահայ ազատագրական պայքարի վրա, «Բանբեր Երևանի Համալսարանի: Հայագիտություն», Երևան, 2014, թիվ 2, էջ 29-44:

АКОПЯН КАРАПЕТ АЛЕКСАНДРОВИЧ

РОЛЬ КАРССКОЙ ОБЛАСТИ В ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ ЗАПАДНЫХ АРМЯН (1880-1908 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01. “История Армении”

Защита состоится 31-го марта 2015 г., в 14^{00} **на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).**

РЕЗЮМЕ

В диссертации всесторонне представлен тот значительный вклад, который с 1880 по 1908 гг. внесло Карсское население и действующие в регионе революционные структуры в дело содействия освободительной борьбе. Работа изложена на основании архивных и документальных источников, материалах прессы, мемуарах и опубликованных материалах, относящихся к данной теме.

Географическое расположение Карса и этнический состав местного населения оставили свой след на организацию освободительной борьбы. Если первое способствовало отправке оружия и боевых групп в освободительные центры западноармянской освободительной борьбы, то значительное присутствие мусульманского населения являлось серьёзным препятствием для освободительной борьбы, часто становясь серьёзной причиной провала боевых групп.

Карсская область была одним из основных опорных пунктов приобретения, хранения и перевозки оружия и боеприпасов для освободительной борьбы.

В диссертации представлены места хранения оружия и пути перевозки оружия и боеприпасов в приграничные населённые пункты, и деятели, осуществляющие эту тяжелейшую работу. Представлено, что военные арсеналы Карса пополнялись не только оружием, приобретенным в разных местах России, но и приобретенными на месте на средства, вырученные разными способами.

Большое место в работе отводилось проблемам организации, вооружения, экипировке боевых групп и переходу ими границ на разных этапах освободительной борьбы. Освещаются проблемы, поставленные перед этими группами, причины провала их большей части. Рассмотрены причины провала экспедиций, созданных в Карсской области, и перешедших в Западную Армению в период самообороны Сасуна 1904 г.

Значительное место выделено деятельности национальных партий по созданию в 1890-ые годы своих структур в Карсской области. Подробно представлены передовые структуры АРФ Дашнакцутюн в освободительной борьбе, их подъемы и падения в разных периодах борьбы. Структура АРФ Дашнакцутюн Карса 1902-1904 гг. особенно оценена как самая боеспособная и мощная структура на всём Кавказе, которая считалась кузницой боевых кадров. Представлен ряд деятелей этой структуры, которые оставили свой след в армянском освободительном движении.

Заключительная глава работы посвящена ослаблению и крушению Карсской структуры АРФ Дашнакцутюн. В этом, свою определенную роль сыграли резкое снижение роли Карсской области в западноармянской освободительной борьбе после поражения самообороны Сасуна, русская революция 1905 г., царская политика по конфискации церковного имущества, выдвижение на первый план восточноармянских проблем в связи с армяно-татарскими столкновениями, принятие “Кавказского проекта” АРФ Дашнакцутюн, нездоровые явления у части населения области, в том числе бывших солдат, массовые преследования российских властей с 1908 г. против АРФ.

HAKOBYAN KARAPET

THE ROLE OF KARS REGION IN THE STRUGGLE FOR LIBERATION OF WESTERN ARMENIA (1880-1908)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on March 31, 2015, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

This report thoroughly represents the important contribution made by Armenian population of Kars region and by revolutionary structures to support the struggle for liberation of Western Armenia. The work is stated on the basis of the archives and documentaries, memoirs, press and scientific literature concerning the subject.

Both the geographical position and ethnic structure had their stamps on the organization of the struggle for liberation. If the first one was favorable to sent martial groups and ammunition to the fight censer, then the significant presence of the Muslim

population was a serious obstacle for the struggle for liberation of ten becoming a serious failure for martial and ammunition transporting groups, too.

Kars region was one of the strong points to get weapons and ammunition, to store them and to transport them to the country.

It is represented in the report all the places of arms stores, the ways to transport arms and ammunition to the bordering settlements and at the same time all the outstanding figures realizing that difficult work. It is shown, that the arms stores of Kars were recruited not only with the arms got supplied from Russia but also with the local means got in different ways.

A great significance is given to martial groups formation, equipment and the frontier passage problems taken place in different stages of the struggle for liberation. The report illustrates all the facing problems of those groups and the failure reasons of the majority.

Some reviews are made about the organized expeditions in Kars region, how they went to Western Armenia during the self-defense of Sasun in 1904.

A great importance is given to the activities of the national parties structures of the 1890s. Liberation struggle of the leading structures of the ARF, their ups and downs in different stages are represented thoroughly. Especially the structure of the ARF in Kars from 1902 to 1904 is estimated as the most efficient and powerful all over Caucasus, and it was also considered as a forge of the liberating combat personnel.

Some figures of that structure are represented who played a leading part in the Armenian liberating movement.

The concluding chapter of the work is devoted to the relaxation and decomposition of the ARF structure of Kars. Many decisive circumstances such as decreasing role of Kars region in the self-defense of Sasun, the Russian revolution in 1905, the czar politics, the confiscation of church property, Armenian-Tatar fights, the Caucasus project enactment, the population of the region, some unhealthy phenomena also among the former soldiers, the mass persecutions by Russian authorities towards the ARF and other circumstances had their essential roles in everything.